ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ հակակոռուպցիոն կենտրոն
TRANSPARENCY INTERNATIONAL anti-corruption center



# 2007 ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

2007 ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ

# ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Սույն հրատարակումն իրականացվել է Բաց հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների ոլորտի կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորման շնորհիվ, սկսած 2008թ.-ից, ԱՅ ԷՖ Ի ԷՍ կազմակերպությունն իր աջակցությունն ու խորհրդատվությունն է տրամադրել «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությանը` ներառյալ այս ուսումնասիրության շրջանակներում: Սույն հրատարակման մեջ արտահայտված տեսակետները հանդիսանում են ԹԻՀԿ տեսակետները և պարտադիր չէ, որ արտացոլեն ԱՅ ԷՖ Ի ԷՍ պաշտոնական քաղաքականությունը կամ դիրքորոշումները:

**Հասցե`** Հայաստան, Երևան 0025,
Այգեստան 9րդ փողոց
**Հեռ.`** (37410) 569910, 553069
**Ֆաքս`** (37410) 571399
**Էլ.փոստ`** info@transparency.am
**Կայք`** www.transparency.am

Դիզայնը և տպագրությունը` Մատիտ Ստուդիա / www.matit.am

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ընտրական գործընթացներում առավել խնդրահարույց ոլորտներից մեկը նախընտրական քարոզչության ֆինանսավորումն է, և հատկապես վարչական ռեսուրսի չարաշահման տրակտիկան: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) և տեղական այլ հասարակական կազմակերպությունների (ՀԿ), ինչպես նաև միջազգային փորձագետների կողմից 2003թ.-ից ի վեր համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերլուծությունները ցույց են տվել, որ դրանց ելքը որոշող առաջնային գործոնը փողն է և ոչ թե գաղափարախոսությունը կամ ծրագիրը: Իշխող վերնախավի և նրա հետ սերտաճած խոշոր բիզնեսի կողմից ֆինանսական հսկայական միջոցների ապօրինի օգտագործումը՝ զուգակցված ընդդիմադիր կուսակցություններին պարտադրված ֆինանսական ու քաղաքական ճնշումների տարատեսակ ձևերի հետ, ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ լրջորեն աղավաղում է ընտրությունների արդյունքների իրական պատկերը:

Միևնույն ժամանակ, լինելով մի շարք միջազգային կոնվենցիաներ ստորագրած և վավերացրած կամ միջազգային կազմակերպություններին անդամակցած պետություն, Հայաստանն ունի պարտավորություններ, որոնք առնչվում են նախընտրական քարոզչության ֆինանսավորման հարցին: Այս կապակցությամբ, նախևառաջ, հարկ է նշել Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցության (ներկայումս՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության) Մարդկային չափողականության համաժողովի՝ 1990թ. հունիսի 29-ի կոպենհագենյան հանդիպման ժամանակ ընդունված փաստաթուղթը: Այն մասնակից պետություններից պահանջում է «*ապահովել օրենքների և հանրային քաղաքականության այնպիսի կիրարկում, որը թույլ կտա քաղաքական քարոզչության անցկացումը արդար և անկախ մթնոլորտում, որում կբացակայեն իշխանությունների վարչական գործողությունները, բռնությունը և ահաբեկումը, որոնք խոչընդոտում են կուսակցություններին և թեկնածուներին ազատորեն ներկայացնելու իրենց հայացքները և պատրաստվածությունը կամ խանգարում են ընտրողներին ծանոթանալու և քննարկելու դրանք կամ էլ ազատորեն իրենց քվեն տալու իրենց նախընտրած*

*թեկնածուին կամ կուսակցությանը՝ առանց վախենալու դրա համար պատժվելուց*» (տես փաստաթղթի 7.7 կետը):

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեն 2003թ. ապրիլի 8-ի Փոխնախարարների 835-րդ հանդիպման ժամանակ ընդունել է անդամ պետություններին ուղղված թիվ 2003(4) Հանձնարարականը, որը վերաբերում էր կուսակցությունների և նախընտրական քարոզարշավների ժամանակ հակակոռուպցիոն ընդհանուր կանոններին: Հանձնարարականը պարունակում է կանոնների մի հավաքածու (16 հոդված), որը պետք է որպես ուղեցույց ծառայի կուսակցություններին և թեկնածուներին ցույց տրվող հանրային և մասնավոր օժանդակության, տեղական և արտասահմանյան նվիրատուների կողմից արվող նվիրատվությունների, նախընտրական քարոզարշավի ծախսերի և ֆինանսավորման թափանցիկության վերաբերյալ:

Երկրորդ, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում նշվում է, որ «*Յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է նաև դիտարկի օրենսդրական և վարչական այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք լինելով համահունչ սույն Կոնվենցիայի խնդիրներին և հիմնված իրենց տեղական օրենսդրության հիմնարար սկզբունքների վրա, կնպաստեն ընտրովի հանրային պաշտոնների համար պայքարող թեկնածուների ֆինանսավորման և, այն դեպքերում, երբ դա կիրառելի է, կուսակցությունների թափանցիկությանը* » (տես Հոդված 7-ի Կետ 3-ը):

Եվ վերջապես, Եվրոպական հարևանության քաղաքականության Եվրոպական Միություն/Հայաստան Գործողությունների ծրագրով Հայաստանի կառավարությանը կոչ է արվում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նպատակաուղղված կլինեն «*հաստատելու կուսակցությունների ֆինանսավորման հստակ և թափանցիկ կանոններ*» (տե՛ս Կետ 4.1.1):

2003 և 2007 թվականների խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ ԹԻՀԿ-ն[1] անցկացրել է քարոզարշավների ֆինանսավորման մոնիտորինգ: Մոնիտորինգի նպատակն էր բացահայտել և վերլուծության ենթարկել քարոզարշավի ֆինանսավորման գործընթացներում կոռուպցիայի դրսևորումները և պատճառները, նպաստել քաղաքական գործիչների գործունեության թափանցիկությանն

1 Մինչ 2008թ. փետրվարը կազմակերպությունը կոչվում էր Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստան:

ու հաշվետվողականությանը, վեր հանել ընտրական օրենսդրության ու դրա կիրարկման թերությունները: Կազմակերպության մոնիտորինգային ծրագրերը, որոնք ֆինանսավորել էր Բաց հասարակության ինստիտուտը, իրականացվել են 2003թ. մարտ-հունիս, 2007թ. նոյեմբեր-հունիս և 2008թ. հունվար-ապրիլ ամիսներին: 2003թ. ծրագիրը և դրա արդյունքները ներկայացված են ԹԻՀԿ-ի վեբ-կայքում (http://www.transparency.am/publications.php?offset=20):

Սույն հրապարակումը ամփոփում է 2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ քարոզարշավի ֆինանսավորման և վարչական ռեսուրսների չարաշահման՝ ԹԻՀԿ-ի կողմից իրականացված մոնիտորինգի գործընթացը և արդյունքները: Հրապարակումը, բացի այս ներածական մասից, ներառում է նաև հետևյալ գլուխները. ա) **ընդհանուր տեղեկություններ ընտրությունների վերաբերյալ,** բ) **օրենսդրական կարգավորման շրջանակը,** գ) **մոնիտորինգի մեթոդաբանությունը,** դ) **մոնիտորինգի արդյունքները,** ե) **եզրակացություն և առաջարկություններ:** 2007թ. խորհրդարանական ընտրությունների պաշտոնական տվյալների և մոնիտորինգի արդյունքների համեմատական աղյուսակը բերված է **Հավելված 1**-ում, իսկ 2008թ. նախագահական ընտրությունների համապատասխան տվյալների համեմատական աղյուսակը՝ **Հավելված 2**-ում:

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2007 ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## *2007թ. խորհրդարանական ընտրությունները*

Ազգային ժողովի (ԱԺ) ընտրությունները անցկացվել են 2007թ. մայիսի 12-ին, երբ հինգ տարի ժամկետով ընտրվում էին ԱԺ 131 պատգամավորներ, որոնցից, համաձայն Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի, 90-ը ընտրվել են կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների համամասնական ցուցակներով[2]: Մնացած 41 մանդատները ստացել են միամանդատ ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով առավելագույն ձայներ հավաքածները:

Քարոզարշավը պաշտոնապես սկսվել է 2007թ. ապրիլի 8-ին: Խորհրդարանական այս ընտրությունների ընթացքում ընդհանուր մթնոլորտը, համեմատած հաջորդ տարի կայացած նախագահական ընտրությունների հետ, համեմատաբար ավելի հանգիստ էր: Հայտ ներկայացրած բոլոր կուսակցությունները, կուսակցությունների դաշինքը, ինչպես նաև մեծամասնական բոլոր թեկնածուները բացի մեկից, որը մերժվել է գրանցման համար անհրաժեշտ ոչ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պատճառով, գրանցվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների կողմից: Այս ընտրությունների ժամանակ վերացվեց երկրից դուրս (ՀՀ դեսպանատներում և հյուպատոսություններում) քվեարկելու հնարավորությունը[3]: Մեկ այլ բացասական երևույթ էր նաև այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (ԿԸՀ) կամ 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ) որևէ մեկում ընդդիմադիր կուսակցությունները ներկայացնող անդամներից ոչ մեկը չընտրվեց այդ հանձնաժողովների ղեկավար կազմում (նախագահի, փոխնախագահի և քարտուղար):

Քարոզարշավի ընթացքը դրական է գնահատվել Եվրոպայում

2 Համաձայն Ընտրական օրենսգրքի 115 հոդվածի երկրորդ կետի, պատգամավորական մանդատները բաշխվում են միայն այն կուսակցությունների միջև, որոնց ընտրական ցուցակները ստացել են վավեր քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5%-ը: Կուսակցությունների դաշինքների համար այդ շեմը 7% է:

3 Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (*ՀՀ Պաշտոնական տեղեկագիր N15(539)* 14 մարտի 2007), որն ուժի մեջ մտավ 2007թ. մարտի 24-ից:

անկախության և համագործակցության կազմակերպության/ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելության (ԸԴԱ) կողմից ճնորհիվ քարոզարշավի անցկացման հանդուրժողական մթնոլորտի, հանրային սեփականություն հանդիսացող լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզչության, օրենքով սահմանված ժամանակահատվածում անվճար եթերաժամի տրամադրմանն առնչվող օրենսդրական պահանջների հարգման և այլ գործոնների[4]: Նախընտրական քարոզչության պաշտոնական ժամանակահատվածում և դրանից առաջ տեղ գտած բռնության մի շարք միջադեպերը, որոնք մատնանշվել էին տեղական դիտորդների կողմից, միջազգային դիտորդների կողմից չեն որակվել որպես ընտրությունների ընդհանուր մթնոլորտի վրա ազդեցություն թողած միջադեպեր: Միևնույն ժամանակ, տեղական դիտորդները մատնանշել են ոչ միայն բռնության, այլև քարոզչության խոչընդոտման, վաղ (նախքան պաշտոնական քարոզչության սկիզբը) քարոզչության, ընտրակաշառքների բաժանման, լրատվամիջոցների կողմնակալության և այլ դեպքեր[5]:

ԸԴԱ զեկույցում նշվել է նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության (որն այն ժամանակ գլխավորում էր մարտի 26-ից Հայաստանի հանրապետական կուսակցության նախագահ դարձած Սերժ Սարգսյանը) կողմից հովանավորված՝ Հայոց բանակի 15-րդ տարեդարձի տոնակատարությունը, որը սկսվեց նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը և շարունակվեց ողջ քարոզարշավի ընթացքում[6], զուգակցվել է (հատկապես քարոզարշավի վերջին շրջանում) իշխող քաղաքական կոալիցիայի առաջատար ուժ հանդիսացող Հանրապետական կուսակցության քարոզարշավի հետ: Զեկույցում մատնացույց է արվել, մի կողմից, կուսակցության կերպարի, և մյուս կողմից, բանակի խորհրդանիշերի ու

4 Տե՛ս *Հայաստանի Հանրապետության 2007թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց,* Վարշավա, 10 սեպտեմբերի 2007թ. (www.osce.org/documents/odihr/2007/09/26169–hy.pdf):

5 Տե՛ս Ընտրությունը ինչն է (www.iyc.am/docs/Report–arm.doc), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (www.hcav.am/Downloads/HCA–Vanadzor–Report–on–Elections–2007.pdf) և Երևանի մամուլի ակումբ (www.ypc.am/Old/Downlowds/Reports/report-2007-arm.pdf) տեղական հասարակական կազմակերպությունների՝ 2007թ. խորհրդարանական ընտրությունների դիտարկումների արդյունքների վերաբերյալ զեկույցները:

6 Հայոց բանակի ստեղծման 15-ամյակի միջոցառումները սկսվեցին 2007թ. հունվարի 28-ին և ավարտվեցին նույն թվականի մայիսի 9-ին:

ձեռքբերումների ակնհայտ սերտաճման փաստին[7], ինչը ԵԱՀԿ Կոպենհագենի 1990թ. փաստաթղթի պահանջներից մեկի (տե՛ս Կետ 5.4), այն է` պետության և իշխող կուսակցության տարանջատման պահանջի, ակնհայտ խախտում է: Միջազգային դիտորդների մեկ այլ կարևոր դիտարկումն էլ «Հանրապետական» (ՀՀԿ) և «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) կուսակցությունների գովազդային վահանակների և պաստառների գերակշռող մեծ թիվն էր` համեմատած այլ կուսակցությունների վահանակների և պաստառների թվի հետ[8]: Միևնույն ժամանակ, եղել են նաև գովազդային գործակալությունների կողմից ընդդիմադիր կուսակցությունների գովազդների համար վահանակների տրամադրումը մերժելու դեպքեր[9]: Մասնավորապես, «Ժառանգություն» և «Օրինաց երկիր» (ՕԵԿ) կուսակցությունները միջազգային դիտորդներին են տրամադրել գովազդային գործակալություններից ստացած մերժման նամակների պատճենները[10]:

Միջազգային դիտորդների կողմից արված մեկ այլ քննադատական դիտարկումը վերաբերում էր լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզչության լուսաբանման հետ կապված հիմնախնդիրներին: Երևանում տեղակայված յոթ հեռուստաընկերությունների, երկու ռադիոընկերությունների և չորս օրաթերթերի` ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից անցկացված մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ, օգտվելով վաղ քարոզչության օրենսդրական կարգավորման բացակայությունից, մի շարք հեռուստաընկերություններ, մասնավորապես «ԱԼՄ»-ն, «Կենտրոնը» և «Հրազդանը», հեռարձակել են քաղաքական գովազդի բնույթի նյութեր հօգուտ որոշ կուսակցությունների, մասնավորապես, Ժողովրդական կուսակցության, ԲՀԿ և Միավորված աշխատավորական կուսակցության[11]: Այդ արդյունքներով նաև վեր է հանվել նորությունների թողարկումներում կառավարությանը և իշխող երեք կուսակցություններին (ՀՀԿ, ԲՀԿ և Հայ Յեղափոխական Դաշնակցություն` ՀՅԴ) նվիրված քաղաքական տեղեկատվության անհամամասնորեն մեծ

7 Տե՛ս *Հայաստանի Հանրապետության 2007թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց,* Վարշավա, 10 սեպտեմբերի 2007թ., էջ 12:

8 *Նույն հղումը, էջ 12:*

9 *Նույն տեղում:*

10 *Նույն տեղում :*

11 *Նույն հղումը, էջ 16:*

ծավալը[12]: Եվ հանրային, և մասնավոր հեռուստաալիքներով ընտրությունների մասնակիցների լուսաբանման մեծ մասն ուներ կողմնակալ բնույթ, ընդ որում այն դրական էր իշխանամետ կուսակցությունների և բացասական՝ ընդդիմադիր կուսակցությունների դեպքում:

2007թ. ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ն կուսակցություններից, թեկնածուներից և անհատ քաղաքացիներից ստացել է բազմաթիվ բողոքներ այնպիսի ընտրախախտումների վերաբերյալ, որոնք առնչվել են քարոզչական պաստառների տեղադրման համար տեղերի հատկացման, Հանրային հեռուստատեսության կողմից քաղաքական գովազդի հեռարձակման ժամերի, ընտրողների հետ հանդիպումների համար դահլիճ տրամադրելը մերժելու, հեռուստաալիքների կողմից թեկնածու հանդիսացող պետական պաշտոնյաների գործունեության լուսաբանման և այլ հարցերին[13]: Բոլոր բողոքներին պատասխաններ էին տրվել ոչ թե ԿԸՀ պաշտոնական որոշումների, այլ ԿԸՀ նախագահի Գ. Ազարյանի անունից հղված նամակների տեսքով: Միջազգային դիտորդներն այս կապակցությամբ եզրակացրել են, որ չնայած ԿԸՀ-ն բողոքները դիտարկել է «*ընդհանուր առմամբ թափանցիկ ընթացակարգով, նրա պաշտոնական պատասխանների որոշ մասը բավարար չափով պատճառաբանված չի եղել*»[14]: Նրանք նաև նշել են, որ ակնհայտ էր ԿԸՀ-ի և ՏԸՀ-երի կողմից նախաձեռնողականության նկատելի բացակայությունը, որոնք քայլեր էին ձեռնարկում միայն պաշտոնական բողոքը ստանալուց հետո՝ չնախաձեռնելով իրենց ենթակա ընտրական հանձնաժողովների գործողությունների և ոչ մի ուսումնասիրություն[15]:

Համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցած կուսակցություններից միայն հինգն են կարողացել, ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, հաղթահարել օրենքով սահմանված 5 տոկոսանոց շեմը, և ԱԺ-ում տեղերն էլ, համապատասխանաբար, բաշխվել են նրանց միջև: Համամասնական ընտրակարգով ընտրված 90 տեղերից ՀՀԿ-ն ստացել է 41 տեղ, ԲՀԿ-ն՝ 18, ՀՅԴ-ն՝ 16, ՕԵԿ-ը՝ 8 և Ժառանգությունը՝ 7: ՀՀԿ-ն գերիշխում էր նաև մեծամասնական ընտրակարգով անցկացված ընտրապայքարի

12 *Նույն տեղում:*

13 Տե՛ս www.elections.am/images/docs/dimum.am:

14 Տե՛ս *Հայաստանի Հանրապետության 2007թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց,* Վարշավա, 10 սեպտեմբերի 2007թ., էջ 20:

15 *Նույն տեղում:*

արդյունքներով. ստացել է 41 տեղերից 23-ը, և ընդհանուր առմամբ 131 տեղից ստանալով 64-ը, դարձել է ԱԺ առաջատար քաղաքական ուժը:

**Աղյուսակ 1. 2007թ. խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքները**

| Կուսակցություններ | Ձայների քանակը և տոկոսային հարաբերությունը[16] |
|---|---|
| 1. Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ) | 458,258 (33.54%) |
| 2. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ) | 204,483 (14.97%) |
| 3. «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ) | 177,907 (13.02%) |
| 4. «Օրինաց երկիր» կուսակցություն (ՕԵԿ) | 95,324 (6.98%) |
| 5. «Ժառանգություն» կուսակցություն | 81,048 (5.93%) |
| 6. Միացյալ աշխատավորական կուսակցություն (ՄԱԿ) | 59,271 (4.34%) |
| 7. «Ազգային միաբանություն» կուսակցություն (ԱՄԿ) | 49,864 (3.65%) |
| 8. «Նոր ժամանակներ» կուսակցություն (ՆԺԿ) | 47,060 (3.44%) |
| 9. Ժողովրդական կուսակցություն (ԺԿ) | 37,044 (2.71%) |
| 10. «Դաշինք» կուսակցություն (ԴԿ) | 32,943 (2.41%) |
| 11. Հայաստանի ժողովրդական կուսակցություն (ՀԺԿ) | 22,762 (1.67%) |
| 12. «Հանրապետություն» կուսակցություն | 22,288 (1.63%) |
| 13. «Իմպիչմենտ» դաշինք | 17,475 (1.28%) |
| 14. Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ) | 8,792 (0.64%) |
| 15. Ազգային ժողովրդավարական կուսակցություն (ԱԺԿ) | 8,556 (0.63%) |
| 16. «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն (ԺՈւԿ) | 8,351 (0.61%) |
| 17. «Ազգային համաձայնություն» կուսակցություն (ԱՀԿ) | 4,199 (0.31%) |
| 18. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ) | 3,686 (0.27%) |
| 19. «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» կուսակցություն (ՔԺՎԿ) | 3,433 (0.25%) |
| 20. Միացյալ ազատական ազգային կուսակցություն (ՄԻԱԿ) | 2,739 (0.2%) |
| 21. Հայաստանի մարքսիստական կուսակցություն (ՀՄԿ) | 2,660 (0.19%) |
| 22. Հայաստանի երիտասարդական կուսակցություն (ՀԵԿ) | 2,291 (0.17%) |
| 23. Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցություն (ՍԴՀԿ) | 989 (0.07%) |

Ընտրական ողջ գործընթացի արդյունքում տեղ գտած բազմաթիվ խախտումների և կեղծիքների պատճառով ընդդիմադիր կուսակցությունները

16 Տե՛ս www.elections.am/images/diagh.jpg:

և լրատվամիջոցները հարցականի տակ դրեցին ընտրությունների արդյունքները: Ընդդիմադիր կուսակցությունները («Արդարություն» դաշինք[17], ՕԵԿ և ԱՄԲ) ներկայացնող ԿԸՀ երեք անդամները հրաժարվեցին խորհրդարանական ընտրությունների նախնական և վերջնական արդյունքների արձանագրությունների տակ ստորագրելուց: 2007թ. մայիսի 26-ին «Օրինաց երկիր», «Նոր ժամանակներ» և «Հանրապետություն» կուսակցությունները, ինչպես նաև «Իմպիչմենտ» դաշինքը առանձին-առանձին դիմեցին ՀՀ Սահմանադրական դատարան (ՍԴ)՝ վիճարկելով համամասնական ընտրակարգով ընտրապայքարի արդյունքները:

ՍԴ-ն որոշեց միավորել վերը նշված բոլոր դիմումները և համատեղ քննել դրանք: Նիստերը տեղի ունեցան 2007թ. հունիսի 1-ից 10-ը: Սահմանադրական դատարանի հունիսի 10-ի՝ ՍԴՈ-703 որոշմամբ հաստատվեցին ընտրությունների պաշտոնական արդյունքները[18]: Համամասնական ընտրակարգով ընտրապայքարի վերաբերյալ բողոքներից բացի ներկայացվեց նաև երեք բողոք մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ (երկուսը՝ ՕԵԿ թեկնածուներից և մեկը՝ ընդդիմությանը հարող անկախ թեկնածուից): 2007թ. հունիս 12-ին ՕԵԿ երկու թեկնածուներն էլ հետ վերցրեցին իրենց բողոքները՝ հայտարարելով, որ իրենք ՍԴ-ին չեն վստահում, իսկ 2007թ. հունիսի 29-ին ՍԴ-ն իր ՍԴՈ-704 որոշումով հաստատեց նաև անկախ թեկնածուի կողմից բողոքարկված ընտրությունների արդյունքները[19]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ Վերջնական զեկույցում նշվեց, որ 2007թ. ընտրությունները, համեմատած նախորդ ընտրությունների հետ, զգալիորեն բարելավում և անցկացվեցին հիմնականում համաձայն ԵԱՀԿ առջև

17 Արդարություն դաշինքը ձևավորվեց 2003թ. խորհրդարանական ընտրություններից անմիջապես առաջ և միավորեց 9 ընդդիմադիր կուսակցությունների: Այդ կուսակցություններն էին Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, «Հանրապետություն» կուսակցությունը, «Ազգային ժողովրդավարական միություն» կուսակցությունը, «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցությունը, Ազգային ժողովրդավարական կուսակցությունը, Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և Հայաստանի սոցիալ դեմոկրատական կուսակցությունը: 2003թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ դաշինքը համամասնական ընտրակարգով մրցապայքարի արդյուքներով զբաղեցրեց երկրորդ տեղը, սակայն 2007թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ չկարողացավ հանդես գալ որպես միացյալ ընդդիմություն և նրա նախկին անդամ-կուսակցությունները կամ մասնակցեցին առանձին ցուցակներով, կամ էլ ընդհանրապես չմասնակցեցին ընտրություններին:

18 Տե՛ս www.concourt.am/armenian/decisions/common/2007/doc/sdv-703.doc:

19 *Տե՛ս նախորդ հղումը:*

սահմանված պարտավորությունների և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային չափորոշիչների[20]: Որպես դրական փոփոխությունների օրինակներ նշվել են ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնք նպաստեցին ԿԸՀ թափանցիկության բարձրացմանը (որպես օրինակ նշվել էին ԿԸՀ կողմից կանոնավոր կերպով անցկացվող մամուլի ասուլիսների ժամանակացույցի սահմանումը), ԿԸՀ վեբ-կայքում առանցքային տեղեկատվության տեղադրումը և էլեկտրոնային տեսքով ՀՀ ընտրողների միասնական ցուցակի (ռեգիստրի) ստեղծումը:

Այնուհանդերձ, Վերջնական զեկույցում նշվել է նաև, որ մի քանի խնդիրներ դեռևս լիարժեք լուծում չեն գտել: Նման խնդիրներից են նախընտրական քարոզչության կարգավորումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքը (հատկապես՝ քվեարկության արդյունքների ամփոփման և արդյունավորման ժամանակ), քվեներ գնելու համար սահմանված պատժամիջոցների չկիրառումը և այլն: Ի լրումն դրա տեղական մի շարք ՀԿ-ներ, ինչպիսիք են «Ընտրությունը քոնն է» և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» կազմակերպությունները, հայտնաբերեցին նաև քվեարկության օրը տեղ գտած մի շարք ընտրախախտումներ, ինչպիսիք էին, օրինակ, քարոզարշավին խոչընդոտելը, ընտրացուցակներում տեղ գտած անճշտությունները, բաց քվեարկությունը, դիտորդների և լիազոր անձանց իրավունքների ոտնահարումը և այլն[21]:

## *2008թ. նախագահական ընտրությունները*

Նախագահական ընտրություններն անցկացվեցին 2008թ. փետրվարի 19-ին: Ընտրապայքարին մասնակցելու համար ԿԸՀ-ի կողմից գրանցվեց

20 Տե՛ս *Հայաստանի Հանրապետության 2007թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույց*, Վարշավա, 10 սեպտեմբերի 2007թ., էջ 1:

21 Նշված և այլ արձանագրությունները ներկայացված են տեղական ՀԿ-ների վերջնական զեկույցներում: Տե՛ս, օրինակ, www.iyc.am/docs/Report–arm.doc «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի 2007թ. խորհրդարանական ընտրությունների դիտորդական առաքելության արդյունքների վերաբերյալ վերջնական զեկույցը: Այս ընտրությունների վերաբերյալ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նմանատիպ վերջնական զեկույցներ (անգլերենով) առկա են ՀԿ-ի վեբ-կայքում (2007թ. ընտրությունների համար տե՛ս www.hcav.am/Downloads/HCA–Vanadzor–Report–on–Elections–2007.pdf: Հայկական հեռարձակող լրատվամիջոցներով 2007թ. ընտրությունների լուսաբանման մոնիտորինգի արդյունքներն առկա են «Երևանի մամուլի ակումբ» ՀԿ-ի վեբ-կայքում (2007թ. ընտրությունների համար տե՛ս www.ypc.am/Old/Downlowds/Reports/report-2007-arm.pdf):

ինը թեկնածու: Նրանցից յոթն առաջադրվել էին կուսակցությունների կողմից, իսկ երկուսը՝ ինքնաառաջադրման կարգով: Կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուներն էին ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը, ԱՄԿ նախագահ Արտաշես Գեղամյանը, ԺԿ նախագահ Տիգրան Կարապետյանը, ԱՀԿ նախագահ Արամ Հարությունյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱԺ նախագահի տեղակալ Վահան Հովհաննիսյանը, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը և ՀՀԿ նախագահ և այն ժամանակ ՀՀ գործող վարչապետ Սերժ Սարգսյանը: Ինքնաառաջադրված թեկնածուներն էին ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանը և ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Այս ընտրությունների քարոզարշավն առանձնացավ, մի կողմից, իշխանական և մերձիշխանական ուժերի, և մյուս կողմից, ընդդիմադիր ուժերի միջև սուր մրցակցությամբ: Լրատվամիջոցներն արձանագրեցին ընդդիմության կողմնակիցների նկատմամբ տեղ գտած ահաբեկման և բռնությունների, «ճիշտ» քվեարկություն ապահովելու նպատակով բնակիչներից անձնագրերի հավաքագրման, Սերժ Սարգսյանի օգտին քվեարկելու դիմաց բնակիչների կոմունալ ծախսերը վճարելու խոստումների, ընտրողներին ընտրակաշառք բաժանելու, քաղաքացիների՝ ընդդիմադիր թեկնածուների հետ կազմակերպվող հանդիպումներին մասնակցելուն խոչընդոտելու, ընդդիմադիր թեկնածուների տեղական նախընտրական շտաբների վրա հարձակվելու բազմաթիվ դեպքեր[22]:

2008թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ Վերջնական զեկույցի 9-րդ գլխի երրորդ (C) բաժինը նվիրված էր քարոզարշավի ժամանակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դերին[23]: Այդ բաժնում միջազգային դիտորդները մատնանշել են բազմաթիվ դեպքեր, երբ պետական պաշտոնյաները քարոզչություն էին իրականացնում Սերժ Սարգսյանի օգտին՝ չգտնվելով արձակուրդի մեջ (օրինակ, Գյումրու, Արմավիրի քաղաքապետերը կամ Օձունի գյուղապետը) կամ էլ ուղեկցում էին վերջինիս նախընտրական քարոզչության շրջանակներում կատարված այցերի ժամանակ (օրինակ, Սյունիքի և Լոռու մարզերի

22 Տե՛ս ԹԻՀԿ վեբ-կայքը՝ www.transparency.am/monitor–archive–2008.php?month=2+2008:

23 *Հայաստանի Հանրապետության 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության Վերջնական զեկույց*, Վարշավա, 30 մայիսի 2008թ., էջ 11-12 (www.osce.org/documents/odihr/2008/05/31397–hy.pdf):

մարզպետները, Երևանի և Վանաձորի քաղաքապետերը), ինչպես նաև այն, որ հանրային ոլորտի աշխատողները (մասնավորապես, դպրոցների ուսուցիչները) և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցները մասնակցում էին Սերժ Սարգսյանի նախընտրական միջոցառումներին:

Միջազգային դիտորդները հատուկ ուշադրություն էին դարձել նաև այն հակասությանը, որը կապված էր Սերժ Սարգսյանի կողմից իր նախընտրական քարոզչությունը ՀՀ վարչապետի և իշխող կոալիցիայի առաջատար ուժ հանդիսացող և ԱԺ-ում ամենամեծ խմբակցություն ունեցող Հանրապետական կուսակցության նախագահի պարտականությունների կատարման հետ համատեղելուն: Բացի այդ, նրանք նշեցին այն փաստը, որ պարոն Սարգսյանը *«նախընտրական քարոզչություն իրականացնելիս օգտվում էր իր հակառակորդների նկատմամբ փաստացի առավելությունից՝ շնորհիվ լրատվամիջոցների կողմից իր պաշտոնական գործունեության դրական լուսաբանման»*[24]:

Որպես իրենց զեկույցի եզրակացություն ԸԴԱ դիտորդները նշել են, որ *«Այն բարենպաստ պայմանները, որոնցում գտնվում էր վարչապետ Սարգսյանը, համատեղելի չեն պետության կողմից իր վրա վերցված իրավական այն պարտավորության հետ, համաձայն որի վերջինս նախընտրական քարոզչության ժամանակ պետք է ապահովի հավասար պայմաններ, ինչպես նաև պետական պաշտոնյաների պարտավորությանը՝ ձեռնպահ մնալու օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը՝ ազդելու քաղաքացիների ազատ կամքի վրա: Դա նաև հանգեցրեց պետության և կուսակցության շահերի տարանջատման էական լղոզմանը: Այս գործոնները հակասում են Հայաստանի կողմից ստանձնած այն պարտավորություններին, որոնք բխում են ԵԱՀԿ 1990թ. կոպենհագենյան փաստաթղթի 5.4, 7.6 և 7.7 կետերից»*[25]:

2008թ. տեղական ՀԿ-ները և ընդդիմադիր մամուլը բազմիցս ահազանգել են բարձր պաշտոններ զբաղեցնող թեկնածուների կողմից վարչական, լրատվական, ֆինանսական և մարդկային միջոցների չարաշահման դեպքերի մասին և վեր են հանել նախընտրական քարոզչության հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր, որոնք նույն էին, ինչ 2007թ. ընտրությունների ժամանակ, այն է՝ լրատվամիջոցների կողմնակալությունը, վաղ քարոզչությունը, քարոզչության անցկացմանը խոչընդոտներ հարուցելը,

24 *Տե՛ս նախորդ հղումը*, էջ 12:
25 *Տե՛ս նույն տեղում:*

ընտրակաշառքների բաժանումը և այլն[26]: Այստեղ անհրաժեշտ է նաև նշել, որ այս անգամ հայտնաբերված խախտումները կրում էին ավելի համատարած բնույթ, քան խորհրդարանական ընտրությունների ժամանակ տեղ գտած խախտումները:

2008թ. փետրվարի 24-ին ԿԸՀ-ն հրապարակեց ընտրությունների վերջնական արդյունքները. Սերժ Սարգսյան՝ 862369, Լևոն Տեր-Պետրոսյան՝ 351222, Արթուր Բաղդասարյան՝ 272427, Վահան Հովհաննիսյան՝ 100966, Վազգեն Մանուկյան՝ 21075, Տիգրան Կարապետյան՝ 9792, Արտաշես Գեղամյան՝ 7524, Արման Մելիքյան՝ 4399 և Արամ Հարությունյան՝ 2892 ձայն: Ըստ ԿԸՀ պաշտոնական հայտարարության, Սերժ Սարգսյանն ընտրություններում հաղթել է 52,8 % ձայներով, Լևոն Տեր-Պետրոսյանը ստացել է ձայների 21,5%-ը, իսկ Արթուր Բաղդասարյանը՝ 16,7%-ը[27]:

Ընտրություններից մի քանի օր հետո՝ փետրվարի 25-ին, Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ ընտրությունների օրինականությունը կասկածի տակ է առնվում բազմաթիվ խախտումների պատճառով[28]: Չորրորդ տեղը զբաղեցրած Վահան Հովհաննիսյանը հրաժարական տվեց խորհրդարանի փոխխոսնակի պաշտոնից՝ վկայակոչելով ընտրակեղծիքները (չնայած նրա կուսակցությունը չվիճարկեց ընտրությունների արդյունքները)[29]: Հինգերորդ տեղը զբաղեցրած Վազգեն Մանուկյանը նույնպես պնդում էր, որ ընտրությունների ընթացքում խախտումներ են տեղի ունեցել, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը, պնդելով, որ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել «զանգվածային կեղծիքներ և խախտումներ», դիմեց ՍԴ՝ պահանջելով անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները: Նույն բովանդակությամբ հայց էր ներկայացրել նաև վեցերորդ տեղը զբաղեցրած Տիգրան Կարապետյանը: 2008թ. մարտի 8-ին ՍԴ-ն երկու հայցն էլ մերժեց[30]:

Քվեարկության օրը, փետրվարի 19-ին, լրատվամիջոցների կողմից ներկայացված նյութերի համաձայն, տեղ գտան բազմաթիվ

26 Տե՛ս www.hcav.am/Downloads/postelectinons–arm.pdf, www.asparez.am/news/archive/archive-4-feb-2008.htm և www.iyc.am/docs/Pres%20final%20report%202008–arm.doc :

27 Տե՛ս www.elections.am/Presidential.aspx :

28 Տե՛ս, օրինակ՝ *Հայկական ժամանակ* օրաթերթի 2008թ. փետրվարի 27-ի համարը (http://www.hzh.am/Arkhiv/2008/fabruary/2702/2702.html) :

29 Տե՛ս, օրինակ՝ www.hzh.am/Arkhiv/2008/fabruary/2302/2302.html :

30 Տե՛ս ՍԴ 2008թ. մարտի 8-ի ՍԴՈ-736 որոշումը www.concourt.am/armenian/decisions/common/2008/doc/sdv-736 վեբ-կայքում:

միջադեպեր և խախտումներ, ինչպիսիք էին, օրինակ, ընտրացուցակներում առկա անճշտությունները, քվեաթափերի լցոնումները, «կարուսելային» քվեարկությունը, ընտրական տեղամասերից տեղական դիտորդներին և ընդդիմադիր թեկնածուների վստահված անձանց դուրս վռնդելը և նույնիսկ ծեծելը[31]: Ընտրությունները դիտարկող տեղական ՀԿ-ները, մասնավորապես «Ընտրությունը քոնն է», Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, նույնպես արձանագրեցին բազմաթիվ խախտումներ, ինչպիսիք էին, օրինակ, բաց քվեարկությունը, հաշմանդամների փոխարեն քվեարկելը, տեղամասային կենտրոններում օրենքով չլիազորված անձանց ներկայությունը, վստահված անձանց և դիտորդների իրավունքների սահմանափակումը, ձայների գնումը, վստահված անձանց վտարումը տեղամասային կենտրոններից և այլն[32]:

Այս անգամ միջազգային դիտորդներն ավելի քննադատաբար գնահատեցին ընտրությունների անցկացումը, քան 2007-ին, նշելով. «*Թեև 2008թ. նախագահական ընտրությունները նախընտրական ժամանակաշրջանում և քվեարկության ժամերին հիմնականում համապատասխանում էին ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորություններին և միջազգային չափանիշներին, որոշ պարտավորությունների առումով լուրջ խնդիրներ ծագեցին, հատկապես քվեարկության օրվանից հետո: Դա ժողովրդավարական ընտրությունների համար էական նշանակություն ունեցող չափանիշների նկատմամբ անբավարար հարգանքի դրսևորում էր և արժեզրկեց ընտրական ընդհանուր գործընթացը: Մասնավորապես, ձայների հաշվարկը վեր հանեց թերություններ՝ կապված հաշվետվողականության և թափանցիկության հետ, իսկ բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին*»[33]:

31 Տե՛ս ԹԻՀԿ-ի վեբ-կայքում 2008թ. ընտրություններին վերաբերող նյութերը (www.transparency.am/monitor–archive–2008.php?month=2+2008):

32 Տե՛ս Ընտրությունը քոնն է (www.iyc.am/news–arm.htm), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (www.hcav.am/Downloads/Report–Presidential–elections–arm.pdf), Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ (www.asparez.am/news/archive/archive-4-feb-2008.htm) և Երևանի մամուլի ակումբ (www.ypc.am/downloads/Elections–report-2008-arm.pdf) տեղական հասարակական կազմակերպությունների 2008թ. նախագահական ընտրությունների՝ իրենց դիտարկումների արդյունքների վերաբերյալ զեկույցները:

33 *Հայաստանի Հանրապետության 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության Վերջնական զեկույց*, Վարշավա, 30 մայիսի 2008թ., էջ 1:

Ընտրություններին հաջորդած ինն օրերի ընթացքում Լևոն Տեր-Պետրոսյանի աջակիցները Երևանի Ազատության հրապարակում կազմակերպեցին խաղաղ ցույցեր ընդդեմ կեղծված ընտրությունների: 2008թ. մարտի 1-ի վաղ առավոտյան ոստիկանական և բանակային ուժերը դաժանաբար ցրեցին ցուցարարներին: Նույն օրն ավելի ուշ Մաշտոցի պողոտայում (թեև ցուցարարների հիմնական զանգվածը հավաքված էր Մյասնիկյանի արձանի ու Ֆրանսիայի դեսպանատան շրջակայքում) ոստիկանական ուժերի և ցուցարարների միջև տեղի ունեցած բախումների արդյունքում զոհվեց տասը մարդ: 2008թ. մարտի 1-ին Նախագահ Քոչարյանի հրամանագրով, որը նույն օրը հաստատվեց ԱԺ կողմից, Երևանում քսան օրով արտակարգ դրություն հայտարարվեց, ինչով, ի թիվս այլոց, արգելք դրվեց ժողովներ, հանրահավաքներ, ցույցեր, երթեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու վրա[34]:

2008թ. մարտի 17-ի ԱԺ-ն իր արտահերթ նիստում ընդունեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը, որով ժողովների ու հանրահավաքների անցկացման արգելքը պահպանվում էր նաև արտակարգ դրության վերացումից հետո[35]: Ձերբակալվեցին ընդդիմության շուրջ 150 ղեկավարներ և ակտիվիստներ: Նրանց դեմ, որոնց թվում էին նաև ԱԺ 4 պատգամավորներ, հարուցվեցին քրեական գործեր և նրանց մեծ մասը դատապարտվեց տարբեր ժամկետների (1-ից 6 տարվա)[36] ազատազրկման: Անցել է ավելի քան մեկ տարի, սակայն շատ քաղբանտարկյալների դատավարությունները դեռ շարունակվում են, և Հայաստանում շարունակվում է ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ կապված աննախադեպ ճգնաժամը:

Հայաստանում հետընտրական դաժան զարգացումներին միջազգային հանրությունն արձագանքեց բազմաթիվ հայտարարությունների և բանաձևերի միջոցով, որոնք ուղղակիորեն արտահայտում էին խորը մտահոգություն

34 Նախագահի 2008թ. մարտի 1-ի ՆՀ-35-Ն հրամանագրով հայտարարվեց արտակարգ դրություն: Չնայած հրամանագիրը հրապարակվեց լրատվամիջոցներում (տե՛ս, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2008թ. մարտի 4-ի համարը)՝ այն այդպես էլ չհրապարակվեց ՀՀ Պաշտոնական տեղեկագրում:

35 Տե՛ս *ՀՀ Պաշտոնական տեղեկագիր* N17 (607) 19 մարտի 2008թ.:

36 Ընդդիմության ակտիվիստների դատավարությունների արխիվների համար տե՛ս, օրինակ՝ www.a1plus.am և www.armenialiberty.org :

երկրում մարդու իրավունքների հետ կապված իրավիճակի կապակցությամբ: Մասնավորապես, հայտարարություններ արվեցին ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ պրն Շոն ՄքՔորմաքի[37], ԵԱՀԿ նախագահ և այն ժամանակ Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարար Իլքա Քանէրվայի անունից՝ արված պրն Հեյքի Թալվիթեիի[38] կողմից, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար պրն Բան Քի-մունի[39], Եվրոպական Միության նախագահության անունից, նախագահող երկիր Սլովենիայի կառավարության[40] և այլոց կողմից:

Այս դեպքերը և դրանց հետևանքները ԵԽԽՎ 2008թ. գարնանային, 2008թ. աշնանային և 2009թ. ձմեռային նստաշրջանների օրակարգում էին: Եվրոպացի խորհրդարանականները բարձրացրին Հայաստանին Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) քվեարկության իրավունքից զրկելու հարցը: Նրանց մտահոգությունները արտացոլված էին Վեհաժողովի կողմից ընդունված՝ 2008թ. ապրիլի 17-ի թիվ 1609[41], 2008թ. հունիսի 25-ի թիվ 1620[42] և 2009թ. հունվարի 27-ի թիվ 1643[43] բանաձևերում:

Մասնավորապես, թիվ 1609 բանաձևը պահանջում է «*մարտի 1-ի իրադարձությունների և դրանց հանգեցնող հանգամանքների անկախ, թափանցիկ և արժանահավատ հետաքննություն*» և այն անձանց անհապաղ ազատ արձակում, «*ովքեր ազատազրկված են կամ ակնհայտորեն արհեստական կամ քաղաքական դրդապատճառներով կամ էլ անձամբ որևէ բռնարարք կամ դրա հետ կապված որևէ լուրջ խախտում չեն կատարել*» (տե՛ս 12.1 Կետը), ինչպես նաև չեղյալ համարել «*Ազգային Ժողովի կողմից «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքում վերջերս կատարված փոփոխությունները՝ համապատասխանեցնելով դրանք Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին*» (տե՛ս 12.3 Կետը): Մինչ այժմ հայաստանյան իշխանությունների կողմից այս բանաձևերի կատարման ուղղությամբ շատ բան չի արվել, և ԵԽԽՎ-ն նորից անդրադառնալու է երկրի իրավիճակին:

Հանրապետությունում առկա հետընտրական ճգնաժամը զգեց

37 http://www.azatutyun.am/content/article/1593574.html :
38 http://www.azatutyun.am/content/article/1593626.html :
39 www.un.org/apps/news/printnews.asp?nid=25823 :
40 http://www.azatutyun.am/content/article/1593653.html :
41 assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1609.htm :
42 assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta08/ERES1620.htm :
43 assembly.coe.int/Mainf.asp?link=/Documents/AdoptedText/ta09/ERES1643.htm :

նրա վարկանիշը մարդու իրավունքների և քաղաքական ազատությունների առումով: ԱՄՆ Պետքարտուղարության Մարդու իրավունքների 2008թ. զեկույցի՝ Հայաստանին վերաբերող բաժնում նշված է. «*Տարվա ընթացքում իշխանությունների վարկանիշը մարդու իրավունքների պաշտպանության առումով զգալիորեն վատացավ նրանց ներկայացուցիչների և նրանց հետ կապված անձանց կողմից մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների պատճառով, մասնավորապես, կապված նախագահական ընտրությունների և դրանց հաջորդող ցույցերի ճնշման հետ*»[44]:

Թեմային առնչվող տեղեկատվության մեկ այլ աղբյուր էլ «Հյումն Րայթս Ուոթչ» միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2009թ. համաշխարհային զեկույցի Հայաստանին վերաբերող գլուխն է, համաձայն որի, «*Հայաստանը հայտնվեց անկախացումից ի վեր առավել լուրջ քաղաքական և քաղաքացիական իրավունքների ճգնաժամի մեջ, երբ մարտի 1-ին անվտանգության ուժերն օգտագործեցին ոչ համաչափ ուժ 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների արդյունքներից բողոքող ընդդիմադիր ցուցարարների դեմ*»[45]: Միջազգային մեկ այլ իրավապաշտպան կազմակերպություն՝ «Ֆրիդոմ Հաուս»-ը նույնպես անդրադարձավ Հայաստանի իրավիճակին իր «Ազատությունն աշխարհում. նահանջ և դիմադրում» ամփոփիչ հոդվածում[46]: Ինչպես նշված է հոդվածի 14-րդ էջում, «*Հայաստանի քաղաքական իրավունքների համաթիվն արձանագրել է նահանջ՝ 5-ից դառնալով 6, 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ իշխանության համար պայքարում ընդդիմության կողմից հաջողությամբ մրցակցելու անկարողության, ինչպես նաև ոստիկանությանը հաջորդող ընդդիմադիր ցուցարարներին բռնի ցրելու և նրանցից ավելի քան 100 ձերբակալված անձանց անազատության մեջ պահելու պատճառով*»[47]: 2009թ. մարտի 11-ին Հազարամյակի մարտահրավերների կորպորացիան (ՀՄԿ) անփոփոխ թողեց Հայաստանի հետ կնքած պայմանագրի շրջանակներում ճանապարհաշինության ֆինանսավորումը սառեցնելու մասին որոշումը, քանի որ «*այն [կառավարությունը] տարիներով չի*

44 www.state.gov/g/drl/rls/hrrpt/2008/eur/119066.htm :

45 Տե՛ս Հյումն Րայթս Ուոթչի «2009թ. համաշխարհային զեկույց. 2008թ. իրադարձությունները Հայաստանում», էջ 1 (www.hrw.org/en/node/79227) :

46 Երկրների մանրամասն զեկույցները կներկայացվեն հանրությանը 2009թ. գարնան վերջում:

47 www.freedomhouse.org/uploads/fiw09/FIW09–OverviewEssay–Final.pdf :

*կարողացել փարատել այն մտահոգությունները, որոնք բարձրացվել էին ոչ միայն ՀՄԿ-ի և ԱՄՆ ղեկավար պաշտոնյաների և այլ գործակալությունների կողմից, այլ նաև ընդհանրապես միջազգային հանրության կողմից: Այժմ արդեն Հայաստանի իշխանությունների պարտականությունն է վերականգնելու Վարչության հավատը ժողովրդավարությանը և արդյունավետ կառավարմանը հավատարիմ լինելու՝ իրենց պարտավորվածությանը»*[48]: Սառեցման վերաբերյալ սկզբնական որոշումը կայացվել էր 2008թ. հունիսին և պատճառաբանվել էր մարդու իրավունքներին և քաղաքացիական ազատություններին առնչվող հիմնահարցերի չլուծված լինելով, իսկ վերջին որոշումը պայմանավորված էր այդ հիմնահարցերի լուծման ուղղությամբ անբավարար առաջընթացով:

48 www.mcc.gov/press/releases/documents/release-031109-board.php :

## ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայեցակարգային առումով քարոզարշավի ֆինանսավորման և վարչական ռեսուրսների օգտագործման իրավական կարգավորումը կարող է բաժանվել չորս փոխկապակցված բաղադրիչների՝ **նախընտրական քարոզչության**, քարոզչության ընթացքում **վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելման, նախընտրական քարոզչության ֆինանսավորման** և **քարոզչության ընթացքի**, **եկամուտների և ծախսերի վերահսկողության և հաշվետվության կարգավորման:** Այս բաղադրիչների վերաբերյալ հիմնական սկզբունքներն ու դրույթները ներկայացված են ՀՀ Ընտրական օրենսգրքի (ԸՕ) առաջին մասում (Գլուխ 1-ից 12, որոնք ներառում են 1-ից 63.2 հոդվածները): Ընտրությունների (նախագահական, խորհրդարանական կամ տեղական ինքնակառավարման մարմինների) միայն կոնկրետ տեսակին առանձնահատուկ դրույթները ներկայացված են օրենսգրքի երկրորդ մասում (13-ից 30.6 գլուխները, որոնք ներառում են 64-ից 138.18 հոդվածները): Բացի այդ, այլ օրենքներում և օրենսգրքերում նույնպես կան դրույթներ, որոնք կարգավորում են ընտրական գործընթացի որոշակի ասպեկտներ: Այդ իրավական ակտերից են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը, «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհրդի կանոնադրության մասին» օրենքը, «Կուսակցությունների մասին» օրենքը, Քրեական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը և այլն[49]:

### *Նախընտրական քարոզչություն*

Ընտրական օրենսգրքի 4-րդ գլուխը (տե՛ս 18-ից 23 հոդվածները) սահմանում է նախընտրական քարոզչության ժամանակաշրջանում քարոզչության և վարչական ռեսուրսների օգտագործման հիմնական սկզբունքները: Հոդված 18-ում ուղղակիորեն սահմանված է քարոզչության ամենակարևոր սկզբունքը՝ անհատ քաղաքացիների և կուսակցությունների

49 Նշված օրենսդրական ակտերն ընդունումից ի վեր ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների և դրանց վերջնական տեսքը կարելի է գտնել, օրինակ, IRTEK իրավական ակտերի էլեկտրոնային բազայում:

կողմից քարոզչություն իրականացնելու ազատությունը: Այդ ազատությունը երաշխավորված է պետության կողմից, որն ապահովում է մասնակից բոլոր թեկնածուների և կուսակցությունների կողմից քարոզչության իրականացումը հավասար հիմունքներով՝ միջոցառումների անցկացման տարածքների անվճար տրամադրմամբ: Բացի այդ, պետությունը պետական սեփականություն հանդիսացող հեռուստառադիոընկերություններից և թերթերից պահանջում է տրամադրել հավասար տևողությամբ եթերաժամանակ կամ հավասար ծավալով մակերես բոլոր թեկնածուներին և կուսակցություններին: Հոդված 18-ի այլ կարևոր դրույթներից են նախընտրական քարոզչության ժամկետների և ձևերի սահմանումը, թեկնածուների և կուսակցությունների կողմից ընտրողներին որևէ ձևի և տեսակի բարիքներ (դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ, ծառայություններ) տալու կամ խոստանալու արգելումը, ընտրական հանձնաժողովների կողմից քարոզչության ընթացքի կարգավորման ընթացակարգերի սահմանումը և կալանքի տակ գտնվող թեկնածուների քարոզչության կարգավորումը:

Հոդված 18-ը կարգավորում է քարոզչության ժամկետները. նախընտրական քարոզարշավը սկսվում է ընտրապայքարին մասնակցելու համար թեկնածուների և կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը և վերջանում քվեարկության օրից մեկ օր առաջ: Քվեարկության և նրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է:

18 հոդվածի մեկ այլ կարևոր դրույթ է նախընտրական քարոզչության սահմանումը: Նշված հոդվածի 6-րդ կետը սահմանում է քարոզչության տեսակները, ինչպիսիք են քարոզչությունը զանգվածային լրատվամիջոցներում, ժողովները, հանրային քննարկումները, հավաքները, ցույցերը, երթերը, տպագիր և տեսաձայնանյութերի տարածումը: Այս դրույթը կարող է օգտակար լինել քարոզարշավի ծախսերը դասակարգելիս: Նույն հոդվածի 7-րդ կետը թեկնածուներին և կուսակցություններին հստակորեն արգելում է կա՛մ անձամբ, կա՛մ իրենց անունից ընտրողներին տալ կամ խոստանալ փող, սննդամթերք, ապրանքներ, ծառայություներ կամ այլ բարիքներ:

Պետությունը ընտրապայքարի մասնակիցներին երաշխավորում է լրատվական ռեսուրսներից օգտվելու հավասար պայմաններ (տե՛ս Հոդված 20-ը): Հավասար պայմաններ ապահովելու պահանջը վերաբերում է ոչ միայն հանրային սեփականություն հանդիսացող, այլ նաև ցանկացած այլ

տիրի սեփականություն հանդիսացող լրատվամիջոցներին՝ բացառությամբ կուսակցությունների կողմից հիմնադրված թերթերի (տե՛ս Հոդված 20-ի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ կետերը): Հոդված 20-ի 4-րդ կետը քարոզչության ֆինանսավորման վերաբերյալ մեկ այլ կարևոր դրույթ է բովանդակում. համամետական ընտրությունների ժամանակ Հանրային հեռուստատեսությունը և Հանրային ռադիոն ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան տասն օր հետո պարտավոր են հրապարակայնորեն հայտարարել հեռարձակման մեկ րոպեի համար իրենց սակագները: Հաջորդ կետն այս պահանջը տարածում է նաև այլ հեռուստառադիոընկերությունների վրա: Նույն հոդվածի 6-րդ կետը ներառում է մեկ այլ կարևոր դրույթ ևս. այն սահմանում է քարոզչության ձևերը զանգվածային լրատվամիջոցներում՝ հանրային քննարկումներ, կլոր սեղաններ, մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, քաղաքական գովազդ և «օրենքով չարգելված այլ ձևեր»:

Ընտրական օրենսգրքից բացի, լրատվամիջոցներում քարոզչության կարգավորումը ապահովվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 11 հոդվածով: Այն կրկնում է Ընտրական օրենսգրքի 20 հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված պահանջները ընտրապայքարի մասնակիցների համար հեռուստատեսությունների և ռադիոընկերությունների կողմից հավասար պայմանների երաշխավորման և եթերաժամանակի մեկ րոպեի սակագինը հրապարակայնորեն հայտարարելու վերաբերյալ, ինչպես նաև ԸՕ 18 հոդվածի արգելքն ընտրության և դրան նախորդող օրը քարոզչություն իրականացնելու վերաբերյալ: Բացի սակագինը հայտարարելուց, Հոդված 11-ը հեռուստառադիոընկերություններից պահանջում է հրապարակայնորեն հայտարարել նաև եթերաժամանակի տրամադրման այլ պայմանների վերաբերյալ: Հոդված 11-ը պարտավորեցնում է նաև քարոզչության անկողմնակալ և չեզոք լուսաբանման միջոցով բոլոր թեկնածուների համար արդար և հավասար պայմանների պահպանման ապահովումը հեռուստառադիոընկերությունների լրատվական ծրագրերում: Հոդվածը նաև նախատեսում է, որ քարոզչությանը վերաբերող բոլոր անվճար և վճարովի (նախընտրական հիմնադրամների կողմից) ծրագրերը, գովազդը և հեռուստատեսությամբ ու ռադիոյով հեռարձակվող այլ հաղորդումները պետք է ուղեկցվեն «նախընտրական քարոզչություն» վերտառությամբ՝ հեռուստատեսությունում, իսկ ռադիոյի դեպքում՝ հաղորդման ընթացքում դրա նպատակի վերաբերյալ նվազագույնը երեք անգամ հիշեցմամբ:

ԸՕ 21 հոդվածը կարգավորում է քարոզչական պաստառների, գովազդային վահանակների և այլ տպագիր նյութերի օգտագործումը: Հոդվածի 1-ին և 2-րդ կետերը վերաբերում են բոլոր թեկնածուների և կուսակցությունների համար քարոզչական տպագիր նյութերը ազատ հրապարակելու և տարածելու հավասար իրավունքներ և տպագիր նյութերը փակցնելու համար համայնքում հատուկ տարածքներ հատկացնելու պահանջմանը, իսկ 6-րդ և 7-րդ կետերը, համապատասխանաբար, նախատեսում են, որ տպագիր նյութերը պետք է տեղեկատվություն պարունակեն հրապարակման համար պատասխանատու կազմակերպությունների և անհատների, ինչպես նաև տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ, և սահմանում են անանուն տպագիր նյութերի տարածման արգելք: Բացի այդ, 22 հոդվածի 3-րդ կետը պահանջում է, որ թեկնածուների և կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ իրականացրած կազմակերպությունը, այլ տվյալների հետ միասին, տեղեկատվություն տրամադրի այն քաղաքական կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի վերաբերյալ, որը պատվիրել է հարցումը, ինչպես նաև դրա արդյունքները հրապարակելու ֆինանսավորման աղբյուրը:

Քարոզչության վերաբերյալ մի քանի դրույթներ, որոնք կիրառելի են ընտրությունների կոնկրետ տեսակների համար, ներառված են Ընտրական օրենսգրքի երկրորդ մասում: Մասնավորապես, ԸՕ 81 հոդվածում նշվում է, որ Նախագահի յուրաքանչյուր թեկնածու իրավունք ունի օգտագործելու Հանրային հեռուստաընկերության՝ ոչ ավելի, քան 60 րոպե և Հանրային ռադիոյի՝ ոչ ավելի քան 120 րոպե անվճար եթերաժամ: Բացի այդ, քարոզչության նպատակներով թեկնածուն Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի  եթերաժամից կարող է վճարովի հիմունքներով օգտվել, համապատասխանաբար, ոչ ավելի, քան 120 և 180 րոպե: Նույն հոդվածի 4.1 կետը սահմանում է Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի անվճար և վճարովի եթերաժամերի համապատասխան չափերը՝ նախագահական ընտրությունների երկրորդ փուլի դեպքում: Երկու թեկնածուներից յուրաքանչյուրն այս դեպքում իրավունք ունի օգտվելու Հանրային հեռուստատեսություն և Հանրային ռադիոյի, համապատասխանաբար, ոչ ավելի, քան 15 և 25 րոպե անվճար, ինչպես նաև 25 և 35 րոպե վճարովի եթերաժամից:

Ընտրական օրենսգրքի 113 հոդվածը նախատեսում է, որ

համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու դաշինքներն իրավունք ունեն օգտվելու Հանրային հեռուստատեսության և Հանրային ռադիոյի անվճար և վճարովի եթերաժամի նույն քանակից, ինչ Նախագահի թեկնածուները նախագահական ընտրությունների առաջին փուլի ժամանակ: Վերջապես, օրենսգրքի 138.15 հոդվածը այս դրույթները տարածում է նաև Երևան քաղաքի ավագանու քարոզչության գործընթացի վրա: Այդ հոդվածի 4 և 5 կետերը սահմանում են Հանրային հեռուստատեսությունում և Հանրային ռադիոյում Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին հասանելիք առավելագույն եթերաժամանակը` անվճար, համապատասխանաբար, 30 և 50 րոպե և վճարովի, համապատասխանաբար, 50 և 80 րոպե:

## *Վարչական ռեսուրսների չարաշահում*

Ընտրական օրենսգրքի մի շարք դրույթներ միտված են կանխելու ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահումը: Օրինակ, ԸՕ 8 հոդվածի 4-րդ կետով պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին և դրանց աշխատակիցներին (իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս), ինչպես նաև ՍԴ անդամներին, դատավորներին, զինվորականներին, ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների աշխատակիցներին արգելվում է քարոզչություն իրականացնել և քարոզչական բնույթի որևէ տեսակի նյութեր տարածել: Օրենսգրքի 22 հոդվածի 2-րդ կետը շատ կարևոր դրույթ է բովանդակում. այդ կետով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվամիջոցների աշխատակիցներին արգելվում է իրենց լիազորությունները գործադրել թեկնածուների միջև անհավասար պայմաններ ստեղծելու կամ քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա ներգործելու նպատակով:

ԸՕ Հոդված 22.1-ը սահմանում է այն թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները, ովքեր քաղաքական կամ հայեցողական պաշտոններ են զբաղեցնում կամ պետական, քաղաքացիական, կամ տեղական ինքնակառավարման մարմինների

աշխատակիցներ են: Նման թեկնածուները իրավունք չունեն՝

1) խարդախություն իրականացնել իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելու ընթացքում կամ չարաշահել իրենց պաշտոնեական դիրքը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար,
2) խարդախության նպատակով օգտագործել իրենց ծառայողական պարտականությունները կատարելու համար տրամադրված շինությունները, տրանսպորտային միջոցները, մարդկային և նյութական ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումների:

Նույն հոդվածով զանգվածային լրատվամիջոցներին արգելվում է լուսաբանել թեկնածուների գործունեությունը, բացառությամբ Սահմանադրությամբ սահմանված դեպքերի, պաշտոնական այցերի և ընդունելությունների, ինչպես նաև տարերային աղետների ընթացքում վերջիններիս իրականացրած, ձեռնարկվող միջոցառումների:

ԸՕ Հոդված 27-ի 4-րդ կետը բովանդակում է վարչական ռեսուրսների չարաշահման կանխարգելմանն ուղղված մեկ այլ դրույթ, որով ՍԴ անդամներին, դատավորներին, ոստիկանության և անվտանգության ծառայության աշխատակիցներին, պաշտպանության նախարարության աշխատակիցներին, հարկային և մաքսային և այլ մարմինների աշխատակիցներին արգելվում է լինել վստահված անձինք: Համաձայն 34 հոդվածի 4-րդ կետի՝ պետական պաշտոնյաների մի լայն խմբի արգելվում է լինել որևէ մակարդակի ընտրական հանձնաժողովի անդամ:

ԸՕ Հոդված 78-ով սահմանվում է, որ Նախագահի այն թեկնածուները, ովքեր գտնվում են պետական ծառայության մեջ կամ աշխատում են տեղական ինքնակառավարման մարմիններում, ընտրությունների ընթացքում պետք է ազատվեն իրենց աշխատանքային պարտականություններից և իրավունք չունեն իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել առավելություն ստանալու նպատակով: Միայն Նախագահը կամ Նախագահի պաշտոնակատարը (որը կարող է լինել կամ ԱԺ նախագահը կամ վարչապետը) կարող են ընտրությունների ընթացքում շարունակել իրենց պարտականությունների

կատարումը, բայց առանց օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքի առավելությունը:

Վերջապես, ՍԴ անդամները, ոստիկանության և ազգային անվտանգության աշխատակիցները, հարկային, մաքսային և դատախազական մարմինների աշխատակիցները, զինծառայողները չեն կարող գրանցվել որպես թեկնածու խորհրդարանական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, այդ թվում Երևան քաղաքի ավագանու ընտրություններում (տե՛ս, համապատասխանաբար, 97, 122 և 138.4 հոդվածները):

## *Քարոզչության ֆինանսավորում*

Համաձայն Ընտրական օրենսգրքի Գլուխ 5-ի հոդված 25-ի՝ կուսակցություններն ու թեկնածուները քարոզչության ֆինանսավորման, ինչպես նաև իրենց ընտրական գրավը մուծելու նպատակով իրավունք ունեն ստեղծելու նախընտրական հիմնադրամներ: Այդ հիմնադրամները բանկային ժամանակավոր հաշվեհամարներ են, որոնցից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում: Նախագահի թեկնածուները և կուսակցություններն ու դաշինքները (որոնք խորհրդարանական և Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցում են համամասնական ընտրակարգով) իրենց նախընտրական հիմնադրամները բացում են Հայաստանի Կենտրոնական բանկում[50]: Անհաս թեկնածուներն իրենց նախընտրական հիմնադրամները բացում են առևտրային այն բանկերում, որոնք մասնաճյուղեր ունեն երկրի բոլոր մարզերում[51]: Հիմնադրամները կարող են բացվել կուսակցությունների (դաշինքների) կամ թեկնածուների առաջադրումից հետո արդեն երկրորդ օրը՝ հիմք ընդունելով համապատասխան ընտրական հանձնաժողովների[52] կողմից առաջադրված կուսակցություններին կամ

50 Իր քարոզչությունը ֆինանսավորելու համար կուսակցությունների դաշինքը ստեղծում է մեկ նախընտրական հիմնադրամ:

51 Խորհրդարանական ընտրությունների ժամանակ միայն կուսակցությունների (դաշինքների) համամասնական ցուցակներում ընդգրկված թեկնածուները նախընտրական հիմնադրամ չեն բացում:

52 Խորհրդարանական և Երևան քաղաքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունները (դաշինքները), ինչպես նաև Նախագահի թեկնածուները դիմում են ԿԸՀ, իսկ մեծամասնական թեկնածուները և տեղական ինքնակառավարման այլ մարմինների ընտրություններին մասնակցող թեկնածուները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ:

թեկնածուներին՝ բանկին ներկայացնելու համար[53] տրված տեղեկանքը: Միայն կուսակցությունների (դաշինքների) կամ անհատ թեկնածուների լիազոր ներկայացուցիչները կարող են օգտագործել նախընտրական հիմնադրամներում կուտակված դրամական միջոցները:

Նույն հոդվածի առաջին կետը սահմանում է, որ նախընտրական հիմնադրամները ձևավորվում են թեկնածուների անձնական միջոցներից, կուսակցությունների սեփական միջոցներից կամ նրանց կողմից իրենց առաջադրած թեկնածուներին տրամադրված միջոցներից, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից կատարվող կամավոր նվիրատվություններից: Այդ հոդվածի հաջորդ կետով սահմանվում է այն իրավաբանական և ֆիզիկական անձանց ցուցակը, ովքեր իրավունք չունեն նվիրատվութուններ կատարել նախընտրական հիմնադրամներին: Դրանք են՝

1) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները,
2) բյուջետային հիմնարկները (կազմակերպությունները),
3) օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձինք,
4) քաղաքացիություն չունեցող անձինք,
5) տնտեսական գործունեություն իրականացնող այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մաս ունեն Հայաստանի կառավարությունը կամ համայնքները,
6) այն կազմակերպությունները, որոնց բաժնեհավաք կապիտալի առնվազն 30 տոկոսը կազմում են օտարերկրյա միջոցները,
7) բարեգործական կամ կրոնական կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և միջազգային հասարակական շարժումները,
8) պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

Նշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամներին կատարած նվիրատվությունները փոխանցվում են պետական բյուջե:

Նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ ֆիզիկական և

53 Համաձայն 25 հոդվածի 1-ին կետի՝ համապատասխան ընտրական հանձնաժողովը առաջադրման փաստը հաստատող տեղեկանքը տալիս է թեկնածուին կամ կուսակցությանը (դաշինքին)՝ վերջինիս կողմից իր առաջադրման համար փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկ օրվա ընթացքում:

իրավաբանական անձանց կողմից կատարվող նվիրատվությունների առավելագույն չափերը սահմանվում են Ընտրական օրենսգրքի` նախագահական, խորհրդարանական և Երևան քաղաքի ավագանու ընտրությունները կարգավորող համապատասխան բաժիններով: Գումարների չափերը սահմանվում են օրենսգրքի 79 հոդվածով (նախագահական ընտրությունների դեպքում), 112 հոդվածով (խորհրդարանական ընտրությունների դեպքում) և 138.16 հոդվածով (Երևանի ավագանու ընտրությունների դեպքում), իսկ տեղական ինքնակառավարման մնացած մարմինների ընտրությունների դեպքում որևէ չափ առհասարակ սահմանված չէ: Սահմանված չափը գերազանցող մուծումները, ինչպես նաև կուսակցությունների կամ թեկնածուների չգրանցման կամ ընտրություններից հետո հիմնադրամներում մնացած գումարների (բացառությամբ ԸՕ-ով նախատեսված դեպքերի) դեպքերում այդ գումարները նույնպես փոխանցվում են պետական բյուջե[54]: Նախընտրական հիմնադրամի առավելագույն չափը լրացված լինելու դեպքում, ըստ 25 հոդվածի 6-րդ կետի, բանկերից պահանջվում է նվիրատուներին վերադարձնել դրանից հետո մուծված գումարները:

Համաձայն ԸՕ 79 հոդվածի` Նախագահի թեկնածուի նախընտրական հիմնադրամը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի (1000 դրամ) 70000-ապատիկը կամ 70 միլիոն դրամը: Գումարի առավելագույն չափը, որ Նախագահի թեկնածուն կարող է մուծել իր նախընտրական հիմնադրամին իր անձնական միջոցներից, հավասար է նվազագույն աշխատաարձի 10000-ապատիկին կամ 10 մլն դրամի: Կուսակցության կողմից Նախագահի թեկնածու առաջադրելու դեպքում վերջինիս նախընտրական հիմնադրամին կուսակցության կատարած մուծման չափը չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի 30000-ապատիկը կամ 30 մլն դրամը: Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ կարող է հիմնադրամին նվիրաբերել, համապատասխանաբար, 200000 և 500000 դրամը չգերազանցող գումար:

Բացի վերոնշյալից, եթե Նախագահի թեկնածուն ստանում է 5%-

54 25 հոդվածի 10-րդ կետի համաձայն, ընտրությունները անվավեր ճանաչվելու դեպքում, նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները սառեցվում են մինչև թեկնածուների կամ կուսակցությունների (դաշինքների) գրանցումը նոր ընտրությունների համար: Այսպիսով, թեկնածուները և կուսակցությունները (դաշինքները) նոր ընտրություններին մասնակցելու համար գրանցվելու դեպքում կարող են մնացած գումարները օգտագործել նոր ընտրարշավի համար:

ից ավելի ձայներ, ապա նա պարտավոր է ընտրությունների պաշտոնական արդյունքների հայտարարմանը հաջորդող երեք ամսվա ընթացքում իր նախընտրական հիմնադրամի մնացած միջոցները օգտագործել բարեգործական նպատակներով: Եթե այդ ժամանակամիջոցում Նախագահի թեկնածուն չի օգտագործում այդ միջոցները, ապա դրանք փոխանցվում են պետական բյուջե: Ձայների 5%-ից պակաս հավաքած Նախագահի թեկնածուների նախընտրական հիմնադրամներում մնացած գումարները անմիջապես փոխանցվում են պետական բյուջե:

Համանման դրույթները վերաբերում են նաև համամասնական ցուցակներով խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցություններին (տե՛ս ԸՕ 112 հոդվածը): Խորհրդարանական ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (դաշինքների) նախընտրական հիմնադրամների չափերը սահմանվել են 60 մլն դրամ՝ կուսակցությունների համար և 5 մլն դրամ՝ մեծամասնական թեկնածուների համար: Կուսակցությունն իր նախընտրական հիմնադրամին կարող է կատարել առավելագույնը 2 մլն դրամի մուծում (դաշինքների դեպքում այս գումարը կարող է մուծվել դաշինքի կուսակցություններից յուրաքանչյուրի կողմից), իսկ անհատ թեկնածուն՝ 1 մլն դրամի մուծում: Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կուսակցությունների (դաշինքների) և անհատ թեկնածուների նախընտրական հիմնադրամներին կատարվող նվիրատվությունների առավելագույն չափերը կազմում են, համապատասխանաբար, 50000 և 150000 դրամ: Ճիշտ նույն առավելագույն չափերն են նախատեսված նաև Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) նախընտրական հիմնադրամների, մուծումների և նվիրատվությունների համար (տե՛ս ԸՕ 138.16 հոդվածը):

### *Քարոզչության իրականացման և եկամուտների ու ծախսերի վերահսկողության ու հաշվետվության կարգավորումը*

Քարոզչության վերահսկողության և վերստուգման գործառույթները վերապահված են տարբեր մակարդակների ընտրական հանձնաժողովներին, տեղական ինքնակառավարման մարմիններին և համապատասխան այլ պետական կառույցներին: Այսպես, համաձայն Ընտրական օրենսգրքի 18

հոդվածի 8-րդ կետի, ընտրական հանձնաժողովները հսկում են թեկնածուների և կուսակցությունների (դաշինքների) կողմից քարոզչության իրականացման համապատասխանությունը օրենքներով և ընթացակարգերով սահմանված կարգին: Խախտման դեպքում համապատասխան հանձնաժողովը խախտողին նախազգուշացնում է տվյալ խախտումը եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Խախտումը չվերացնելու դեպքում հանձնաժողովը դիմում է դատարան` խախտումը կատարած թեկնածուների կամ կուսակցությունների գրանցումը ուժը կորցրած ճանաչելու համար:

ԸՕ 20 հոդվածի 2-րդ կետով ԿԸՀ-ն լիազորվում է համապետական ընտրությունների համար կուսակցությունների (դաշինքների) և թեկնածուների գրանցման ավարտի հաջորդ օրը սահմանելու Հանրային հեռուսատեսությամբ և Հանրային ռադիոյով վճարովի ու անվճար եթերաժամանակի տրամադրման կարգը և ժամանակացույցը: Նույնը վերաբերում է նաև Հանրային հեռուսատեսությամբ և Հանրային ռադիոյով վճարովի ու անվճար եթերաժամանակի տրամադրման կարգավորմանը Երևանի ավագանու ընտրությունների դեպքում (տե՛ս ԸՕ 138.15 հոդվածը): Հոդված 20-ի 9-րդ կետով զանգվածային լրատվամիջոցներում քարոզարշավը կարգավորող դրույթների իրականացման վերահսկողության պատասխանատվությունը դրվում է Հեռուսատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) վրա: Խախտումներ հայտնաբերելու դեպքում ՀՌԱՀ-ն իրավասու է դիմել դատարան, իսկ ԿԸՀ-ն իրավասու է դատարան ներկայացնել իր կարծիքը խախտումների վերաբերյալ:

«ՀՌԱՀ կանոնակարգի մասին» ՀՀ օրենքի 79 հոդվածի համաձայն, վերջինս 500000 դրամի տուգանք է սահմանում այն հեռուսաընկերության կամ ռադիոընկերության նկատմամբ, որը քարոզչական բնույթի հաղորդումներ է հեռարձակում այն ժամանակահատվածում, երբ քարոզչությունն արգելված է (քվեարկության օրը և դրան նախորդող օրը): Նույն օրենքի 80 հոդվածը ՀՌԱՀ-ին լիազորում է 100000-200000 դրամի չափով տուգանել այն հեռուսառադիոընկերություններին, որոնք խախտում են «նախընտրական քարոզչություն» կամ «քաղաքական գովազդ» վերտառությունը զետեղելու (հեռուսաընկերությունների դեպքում) կամ հեռարձակման ընթացքում լսարանին առնվազն երեք անգամ հաղորդման բնույթի մասին հիշեցնելու պահանջը (ռադիոընկերությունների դեպքում): Վերջապես, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են կարգավորել իրենց համայնքի

տարածում քարոզչական բնույթի տպագիր նյութերը փակցնելու հարցերը (տե՛ս ԸՕ 21 հոդվածը):

Ընտրական օրենսգրքի 25 հոդվածի 6-րդ կետը այն բանկերից, որոնցում բացված են նախընտրական հիմնադրամներ, պահանջում է բոլոր գործարքների վերաբերյալ (նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումներ և դրանցից արվող ծախսեր) յուրաքանչյուր երեք օրը մեկ տեղեկանք ներկայացնել համապատասխան ընտրական հանձնաժողովներին: Նույն հոդվածի 7-րդ կետով նախատեսվում է, որ եթե թեկնածուները կամ կուսակցությունները (դաշինքները) բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից օգտագործեն նաև այլ միջոցներ, ապա ԿԸՀ-ն կարող է դիմել դատարան՝ վերջիններիս գրանցումը ուժը կորցրած համարելու պահանջով: Հաջորդ՝ 8-րդ կետը պարտավորեցնում է նախընտրական հիմնադրամների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցնել՝ սկսած քվեարկության օրվանից: Սակայն 9-րդ կետով նախատեսվում է, որ ԿԸՀ-ն կարող է թույլ տալ նախընտրական հիմնադրամներից վճարումներ կատարել քվեարկության օրվանից հետո, եթե այդ վճարումները կատարվում են այն գործարքների համար, որոնք տեղի են ունեցել քվեարկության օրվանից առաջ:

Գրանցված բոլոր թեկնածուներից և կուսակցություններից (դաշինքներից) պահանջվում է հաշվետվություն ներկայացնել իրենց նախընտրական հիմնադրամի միջոցով կատարված գործարքների վերաբերյալ: Օրենսգրքի 25 հոդվածի 11-րդ կետը սահմանում է, որ նրանք նախընտրական հիմնադրամի միջոցով կատարված գործարքների վերաբերյալ հայտարարագիր են ներկայացնում այն ընտրական հանձնաժողովներին, որտեղ իրենք գրանցված են: Ընտրությունների ընթացքում հայտարարագիր ներկայացվում է երկու անգամ՝ քարոզչությունը սկսվելուց հետո 10-րդ օրը և ոչ ուշ քան «ընտրությունների ավարտից» (վերջնական արդյունքների հայտարարման օրից) վեց օր հետո: Նույն կետով սահմանվում է, թե ինչ տեղեկատվություն պետք է բովանդակի ներկայացվող հայտարարագիրը: Դրանք են.

1) նախընտրական հիմնադրամ կատարվող մուծումների կատարման ամսաթվերը, դրանց կատարողների անունները, հասցեներն ու մուծված գումարների չափը,
2) կատարված ծախսերը, դրանց կատարման ամսաթվերը և այդ ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները,
3) հիմնադրամում մնացած գումարի չափը:

Հայտարարագրի ձևը և այն ներկայացնելու կարգը սահմանում է ԿԸՀ-ն: Նույն կետով համամասնական ընտրություններին մասնակցող թեկնածուներից և կուսակցություններից (դաշինքներից) հայտարարագրեր ստացող ընտրական հանձնաժողովները այդ հայտարարագրերը 3 օրվա ընթացքում ուղարկում են ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (ՎՎԾ): ՎՎԾ-ի կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է ԿԸՀ-ի կողմից: ՎՎԾ-ն ստեղծվում է միայն համամասնական ընտրությունների ժամանակ` պետական բյուջեից ընտրական հանձնաժողովներին տրամադրված միջոցների օգտագործումը, ինչպես նաև նախընտրական հիմնադրամների միջոցով կատարվող գործարքները վերահսկելու նպատակով (տե՛ս Ընտրական օրենսգրքի 26 հոդվածը): Այդ մարմինը ստեղծվում է ընտրությունների նշանակման օրը, իսկ դրա գործունեությունը դադարեցվում է ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո 45-րդ օրը: ԿԸՀ-ից հայտարարագրերը ստանալուց հետո 20 օրվա ընթացքում ՎՎԾ-ն ստուգում է հայտարարագրերը և ստուգման արդյունքները ներկայացնում ԿԸՀ:

Նախագահի թեկնածուների և համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների (դաշինքների) հայտարարագրերը ՎՎԾ-ում 3 օրվա ընթացքում նախնական ստուգումից հետո հետո եռօրյա ժամկետում տեղադրվում են ԿԸՀ ինտերնետ կայքում (www.elections.am): Մյուս թեկնածուների դեպքում նրանց հայտարարագրերի պատճենները (դրանք ԿԸՀ կայքում չեն տեղադրվում) կարող են տրամադրվել վստահված անձանց, ԶԼՄ-երի ներկայացուցիչներին և դիտորդներին:

Հայաստանի ընտրական օրենսդրությունը նաև պատժամիջոցներ է նախատեսում քարոզչության և քարոզչության ֆինանսավորման դրույթները խախտելու համար: Մասնավորապես, ԸՕ 139 հոդվածը սահմանում է ԸՕ պահանջների այն 30 խախտումները, որոնց համար թեկնածուները և կուսակցությունները (դաշինքները) կարող են պատասխանատվության ենթարկվել: Այդ խախտումներից են`

1) քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչություն կատարելը,
2) քվեարկությանը նախորդող 7 օրվա ընթացքում թեկնածուների վարկանիշի վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները հրապարակելը,
3) նախընտրական քարոզչություն կատարելու իրավունք չունեցող

ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական փառոգչություն կատարելը եւ փառոգչական նյութեր տարածելը,
4) փառոգչության անցկացման ընթացքը խոչընդոտելը,
5) անանուն փառոգչական նյութեր տարածելը,
6) նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ օրենքով սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնելուց հրաժարվելը,
7) տեղական լրատվամիջոցների կողմից թեկնածուների փառոգչության համար հավասար հնարավորություններ չապահովելը:

Ընտրական օրենսդրության պահանջների խախտումների համար հատուկ պատժամիջոցներ են սահմանված Հայաստանի քրեական օրենսգրքով (տե՛ս 149 -154.5 հոդվածները) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով (տե՛ս $40^1$ - $40^7$ հոդվածները): Սակայն փառոգչությանն ու փառոգչության ֆինանսավորմանը վերաբերող խախտումների վերոնշյալ 7 տեսակներից ոչ բոլորն են ուղղակիորեն արտացոլված նշված հոդվածներում: Քարոզչության և փառոգչության ֆինանսավորման դրույթների խախտումների դեմ հատկապես ուղղված հոդվածներն են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $40^1$ հոդվածը (քվեարկության կամ դրան նախորդող օրը փառոգչությամբ զբաղվելը) և $40^3$ հոդվածը (նախընտրական հիմնադրամի մասին հաշվետվություն չներկայացնելը): Համաձայն $40^1$ հոդվածի՝ քվեարկության կամ դրան նախորդող օրը փառոգչությունը առաջացնում է տուգանք 200000-ից մինչև 500000 դրամի չափով: Նախընտրական հիմնադրամի գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն չներկայացնելն առաջացնում է տուգանք 100000-ից մինչև 200000 դրամի չափով:

Քրեական օրենսգրքի (ՔՕ) 149, 151 և 154.2 հոդվածները նույնպես կարելի է կիրառել փառոգչությանն առնչվող ընտրախախտումները պատժելու նպատակով: Օրինակ, 149 հոդվածը տուգանք է նախատեսում փաղաքացիների քվեարկելու իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքին կամ ընտրություններին մասնակցող անձանց պարտականությունների կատարմանը խանգարելու դեպքում (տուգանք 300000-ից մինչև 500000 դրամի չափով կամ կալանք մինչև երեք ամիս ժամկետով, իսկ եթե նույնը կատարվում է ծանրացուցիչ հանգամանքներում, ապա՝ ազատազրկում 2-ից 5 տարի ժամկետով): ՔՕ 151 հոդվածը

տուգանք է նախատեսում ընտրություններին մասնակցող թեկնածուի կամ կուսակցության (դաշինքի) դեմ վարկաբեկիչ նյութերի տարածման դեպքում (տուգանք 400000-ից մինչև 700000 դրամ կամ ազատազրկում 1-ից 5 տարի ժամկետով): Վերջապես, ընտրողների ազատ կամքի արտահայտությանը խանգարելու վերաբերյալ ՔՕ 154.2 հոդվածը հստակ կերպով սահմանում է ընտրակաշառքների համար նախատեսված պատժամիջոցները[55]: Ըստ այդ հոդվածի, կաշառք վերցնողը տուգանվում է 200000-ից մինչև 500000 դրամի չափով կամ ազատազրկվում 1-ից մինչև 3 տարի ժամկետով, իսկ կաշառք տվողը՝ կա՛մ տուգանվում է 500000-ից մինչև 1000000 դրամի չափով, կա՛մ ազատազրկվում 2-ից 5 տարի ժամկետով:

55 ՔՕ 154.2 հոդվածը տուգանք է նախատեսում ոչ միայն կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության (դաշինքի) օգտին քվեարկելու համար կաշառք ստանալու դեպքում, այլ նաև՝ կաշառքի դիմաց կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության (դաշինքի) դեմ քվեարկելու դեպքում, ինչպես նաև կաշառքի դիմաց առհասարակ ընտրություններին մասնակցելու կամ չմասնակցելու համար:

# ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախընտրական քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգը ներառում էր հետևյալ գործողությունները: Մոնիտորինգ իրականացնող խումբը ուսումնասիրեց և վերլուծեց համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու կուսակցությունների դաշինքների (2007թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ) և ՀՀ Նախագահի թեկնածուների (2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ) **ծախսերի և եկամուտների պաշտոնական տվյալները**, որոնք վերցվեցին ԿԸՀ կայքում (www.elections.am) տեղադրված նախընտրական հիմնադրամների հայտարարագրերից: Նշված խումբն իրականացրեց նաև **քարոզչության ծախսերի անկախ մոնիտորինգ**: Այնուհետև իրականացվեց անկախ մոնիտորինգի և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) պաշտոնական հայտարարագրերում ներառված ծախսային տվյալների **համեմատական վերլուծություն**: Բացի այդ, մոնիտորինգի խումբը հավաքեց **վարչական ռեսուրսի չարաշահման և ընտրակաշառքի** մասին մամուլում և տարբեր զեկույցներում տեղ գտած փաստերը:

Հարկ է նաև նշել, որ, չնայած երկու ընտրությունների ժամանակ էլ քարոզչությունն իրականացվում էր ամբողջ հանրապետությունով մեկ, տեղերում մարդկային ռեսուրսների պակասի պատճառով մոնիտորինգն իրականացվեց միայն Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Այնուամենայնիվ, մոնիտորինգի տվյալները ներառում են քարոզչության ծախսերի զգալի մասը: Ծախսերի մոնիտորինգը ներառում էր կուսակցությունների (դաշինքների), թեկնածուների կամ անկախ երրորդ անձանց կողմից կազմակերպված և վճարված քարոզչական գործունեության (գովազդ, նախընտրական հանդիպումներ, միտինգներ, երթեր և այլն) գնահատումը[56]:

Այս կապակցությամբ արժե նշել, որ ԿԸՀ-ի կողմից հաստատված նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ձևը (տե՛ս ԿԸՀ 2005թ. օգոստոսի 3-ի թիվ 37 որոշումը) չի հստակեցնում, թե ինչպես պետք է

56 Նախընտրական քարոզչության միջոցառումների մոնիտորինգի ժամանակ մոնիտորինգ իրականացնողները գրանցել են նաև վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերը, եթե միջոցառումները տեղի էին ունենում աշխատանքային ժամերին կամ այդ միջոցառումներին մասնակցում էին պետական պաշտոնյաները:

հայտարարագրվեն ծախսերը: Չեն հստակեցված նաև ծախսային հոդվածների դասակարգումները: Արդյունքում, օրինակ, և՛ 2007թ. խորհրդարանական, և՛ 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ որոշ կուսակցություններ (Ժառանգություն, Օրինաց Երկիր և ՀՅԴ) և նախագահական թեկնածուներ (Արթուր Բաղդասարյան և Վահան Հովհաննիսյան) իրենց հայտարարագրերում կատարված ծախսերը ներկայացրեցին քարոզչության ժամանակ իրենց ապրանքներ և ծառայություններ մատուցած ընկերություններին վճարած գումարների տեսքով: Շատ դեպքերում հայտարարագրերում հստակեցված չէին ծախսերի տեսակները՝ ներկայացնելով դրանք ոչ հստակ ծախսային տողով (օրինակ, «քարոզչության ծախսեր» արտահայտությունը, որն իր մեջ կարող է ներառել բուկլետներ և պաստառների տպագրությունը, եթերաժամի համար վճարումը, գովազդային հոլովակների պատրաստումը և այլն): Այդ իսկ պատճառով շատ դեպքերում հնարավոր չեղավ մանրամասնորեն և միատեսակ մոտեցումով համեմատել հայտարարագրերում ներկայացված պաշտոնական թվերը և անկախ մոնիտորինգի արդյունքները:

Դիտարկված քարոզչական նյութերի և միջոցառումների հաշվարկված արժեքներն այնուհետև օգտագործվեցին հաշվարկելու համար քարոզչության ծախսերը: Դրանց արժեքները հաշվարկվել են www.elections.am կայքում տեղադրված նախընտրական հիմնադրամների հայտարարագրերից վերցված պաշտոնական տեղեկատվության և քարոզչությանն առնչվող ծառայություններ մատուցող ընկերություններից ստացված գնացուցակների ու այլ տվյալների հիման վրա: Այնուհետև հայտարարագրերի պաշտոնական տվյալները համեմատվել են անկախ մոնիտորինգի միջոցով ձեռք բերված տվյալների հետ:

Մոնիտորինգի խումբը դիմել է ապրանքներ և ծառայություններ մատուցողներին (թերթեր, տպագրատներ և հրատարակչություններ, կուսակցությունների (դաշինքների) լոգոտիպերը, անվանումներն ու Նախագահի թեկնածուների անունները կրող շապիկներ և գլխարկներ արտադրող տեքստիլ ֆաբրիկաներ)՝ խնդրելով տեղեկատվություն տրամադրել կուսակցությունների (դաշինքների) և Նախագահի թեկնածուների կողմից իրենցից ձեռք բերված նյութերի (ծառայությունների) տեսակի, քանակների (ծավալների) և գների մասին: Խումբը լրատվամիջոցներին չի դիմել, քանի որ լրատվամիջոցների միջոցով կազմակերպված քարոզչության վրա ծախսված ժամանակի մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը

տրամադրեց գործընկեր ՀԿ-ն՝ Երևանի մամուլի ակումբը, որը ընտրությունների ժամանակ իրականացնում էր լրատվամիջոցների մոնիտորինգ (տե՛ս ստորև): Լրատվամիջոցների հետ կապված ծախսերի հաշվարկը կատարվել է փարոզչությունից առաջ հեռուստառադիոընկերությունների կողմից հրապարակայնորեն հայտարարված և ԿԸՀ-ի կայքում տեղադրված պաշտոնական սակագների հիման վրա:

Երևանում, Գյումրիում և Վանաձորում մոնիտորինգի խմբերը տեղեկատվություն հավաքեցին փարոզչական տպագիր նյութերի (պաստառներ, գրքույկներ, բրոշյուրներ, օրացույցներ և այլն), փարոզչական բովանդակությամբ գովազդային վահանակների, փարոզչական բնույթի միջոցառումների, ինչպես օրինակ՝ երթեր, մամուլի ասուլիսներ և համերգներ, կազմակերպման ծախսերի և գովազդային նյութերի (շապիկներ, գլխարկներ և այլն) տպաքանակների և գների վերաբերյալ: Բացի այդ, կուսակցությունների (դաշինքների) և նախագահական թեկնածուների փարոզչության կազմակերպիչներից նույնպես խնդրվեց տեղեկատվություն տրամադրել փարոզչության շրջանակներում իրականացված այն գործունեության մասին, որոնց ծախսերը կատարվել են իրենց նախընտրական հիմնադրամների միջոցներով: Նրանցից խնդրվեց նաև ներկայացնել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում փարոզչության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը: Սակայն առանձնապես շատ տեղեկատվություն չտրամադրվեց, քանի որ կուսակցությունները (2007թ.) և Նախագահի թեկնածուները (2008թ.) պատճառաբանեցին, թե իրենք նախապես սահմանված ժամանակացույց չունեն, և որ իրենք սովորաբար միջոցառումը կազմակերպում են իրականացնելուց 1-2 օր առաջ կամ նույնիսկ նույն օրը:

Մեթոդաբանական մեկ այլ հիմնախնդիր էլ կապված էր այն իրողության հետ, որ կուսակցությունների և նախագահական թեկնածուների մեծ մասը չէր հայտարարագրում փարոզչությանն առնչվող որոշ տեսակի ծախսեր, ինչպիսիք էին, օրինակ, մարզեր այցելելու, համերգների, նախընտրական ժամանակավոր շտաբների, փարոզչության մեջ ներգրավված անձանց վարձատրության ծախսերը: Այդ կուսակցությունների և թեկնածուների ներկայացուցիչները պնդում էին, որ այդ ծախսերն իրենց վրա են վերցրել իրենց կողմնակիցներն ու աջակիցները, իսկ փարոզչության մեջ ներգրավված անձինք դա անում էին անվճար հիմունքներով՝ հիմնականում

որպես կուսակցական ակտիվիստներ: Պարկ է նշել նաև, որ իրենց այս պնդումները հաստատող որևէ փաստաթուղթ չէր ներկայացվում: Հետևաբար, ծախսերի այս տեսակները նույնպես չեն ներառվել համեմատական վերլուծության մեջ:

Ինչպես նշել ենք վերևում, լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքները տրամադրվել էին Երևանի մամուլի ակումբի կողմից, որը հաշվարկել էր հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակված քարոզչական բնույթի գովազդային նյութերի հեռարձակման տևողությունը (վայրկյաններով) և թերթերում տեղադրված քարոզչական բնույթի գովազդի ու հոդվածների մակերեսը (սմ$^2$-ով): Ընդ որում, դիտարկվել են միայն այն քարոզչական նյութերը, որոնք պարտադիր որպես այդպիսին են հանդիսանում համաձայն «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 11 հոդվածի, այն է՝ այն գովազդն ու հաղորդումները, որոնք հեռարձակվել են «քաղաքական գովազդ» կամ «քարոզչական նյութ» վերտառությամբ կամ այն ռադիոհաղորդումները, որոնք ուղեկցվել են համապատասխան հայտարարություններով (հեռարձակման ընթացքում առնվազն երեք անգամ): Թերթերի դեպքում գովազդի կամ հոդվածի վերջում պետք է դրված լիներ «R» կամ «Գ» նշանը: Պանրային հեռուստատեսությամբ ցուցադրված գովազդային հոլովակների արժեքը գնահատվեց փորձագետների կողմից՝ ելնելով նմանատիպ արտադրանքի միջին շուկայական գներից:

Ծախսային մոնիտորինգին զուգահեռ, 2007 և 2008 թվականների ծրագրերը ներառում էին նաև վարչական ռեսուրսի (ֆինանսական, ինստիտուցիոնալ, ուժային, կարգավորիչ, օրենսդրական և լրատվական) չարաշահման և ընտրակաշառքի մոնիտորինգը: Մոնիտորինգային տվյալների հիմնական աղբյուր էին հանդիսանում նախընտրական քարոզչությունը լուսաբանող լրատվամիջոցները, ինչպես նաև այլ հրապարակումներ ու զեկույցներ, և մոնիտորինգային խմբի անդամների անձնական դիտարկումները:

# ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մոնիտորինգի արդյունքները ներկայացված են սույն հրապարակման հավելվածներում: **Հավելված 1-ում** ներկայացված են 2007թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ կուսակցությունների (դաշինքների) նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը (սեղմ ձևով) և անկախ մոնիտորինգի տվյալները: Նմանապես, **Հավելված 2-ը** ներառում է 2008թ. նախագահական ընտրություններին մասնակցած՝ Նախագահի թեկնածուների նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը (նույնպես սեղմ տեսքով) և այդ ընտրությունների ժամանակ իրականացված անկախ մոնիտորինգի տվյալները: Երկու ընտրությունների պարագայում էլ նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը վերցվեցին ԿԸՀ վեբ-կայքից (www.elections.am): Ստորև ներկայացված է հայտարարագրերի պաշտոնական տվյալների և անկախ մոնիտորինգի արդյունքների համեմատական վերլուծությունը, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահման՝ առավել հաճախ կրկնվող դեպքերի նկարագրությունը:

## *2007թ. խորհրդարանական ընտրություններ*

Կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի վերլուծության և մոնիտորինգի արդյունքների հետ դրանց համեմատության միջոցով վեր հանվեց հետևյալը:

1. Ընտրություններին մասնակցած և նախընտրական հիմնադրամ ձևավորած 21 կուսակցություններից և կուսակցությունների մեկ դաշինքից[57] 10-ի դեպքում հիմնադրամների հայտարարագրերում ներկայացված ծախսերն էապես ավելի քիչ էին ներկայացված (ավելի քան 10%), քան ցույց էին տալիս անկախ մոնիտորինգի արդյունքները: Այդ փաղափական ուժերն էին «Քրիստոնեաժողովրդավարական վերածնունդ կուսակցությունը» (ՔԺՎԿ), Հայաստանի դեմոկրատական

57 Մասնակից մեկ կուսակցություն՝ Հայաստանի մարքսիստական կուսակցությունը, նախընտրական հիմնադրամ չէր ձևավորել:

կուսակցությունը (ՀԴԿ), «Ազգային համաձայնություն» կուսակցությունը (ԱՀԿ), «Ժողովրդավարական ուղի» կուսակցությունը (ԺՈւԿ), Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (ԲՀԿ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Սոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ), Միացյալ ազատական ազգային կուսակցությունը (ՄԻԱԿ) և Հայաստանի երիտասարդական կուսակցությունը (ՀԵԿ):[58] Ընդ որում, ԲՀԿ-ի և ՀՀԿ-ի դեպքում ընտրողների ծախսերը ցույց էին տալիս, համապատասխանաբար, 129.7 և 79.2 մլն. դրամ, ինչը գերազանցում էր ԸՕ 112 հոդվածով նախընտրական հիմնադրամների համար սահմանված (60 մլն. դրամ) վերին շեմը:

Ելնելով մի շարք պատճառներից՝ հնարավոր չեղավ իրականացնել ստացված ընտրողական ծախսերի և հայտարարագրերում բերված ծախսային ծախսերի ավելի ընդգրկուն համեմատական վերլուծություն: Առաջին պատճառն այն էր, որ կուսակցությունների մեծ մասի հայտարարագրերում ծախսային հոդվածները հստակ չէին սահմանված: Այդպիսի անորոշ սահմանումների օրինակներից էին «քարոզչության ծախսեր» (տե՛ս ԱՀԿ-ի հայտարարագիրը), «ծառայությունների մատուցում» («Ազգային միաբանություն» կուսակցության (ԱՄԿ) հայտարարագրում), «գովազդային ծառայություններ» (Միացյալ աշխատավորական կուսակցության (ՄԱԿ) հայտարարագիր), «վճարում տպագրատանը» (ԺՈւԿ-ի հայտարարագիր), «գույքի ձեռքբերում» («Իմպիչմենտ» դաշինք) և այլն: Մեկ այլ, բոլոր կուսակցությունների համար ընդհանուր հիմնախնդիր էր այն, որ մի շարք ծախսեր միավորված էին մեկ ծախսային հոդվածի մեջ (օրինակ, վճարովի եթերաժամի և գովազդային հեռուստահոլովակների վրա կատարված ծախսերը ներկայացված էին մեկ հոդվածով այն դեպքում, երբ ընտրողական խումբը դրանք հաշվարկում էր առանձին): Նախընտրական հիմնադրամ

58 Ծախսային ընտրողների ծախսերը գերազանցում էին հայտարարագրերում ներկայացված ծախսերին նաև «Օրինաց Երկիր» կուսակցության, «Իմպիչմենտ» դաշինքի, «Հանրապետություն» կուսակցության և Միացյալ աշխատավորական կուսակցության դեպքում, սակայն այդ տարբերությունը 10%-ից պակաս էր:

ձևավորած 21 կուսակցություններից և դաշինքից միայն 5-ն էին տարանջատել իրենց հայտարարագրերում (վերը բերված օրինակում) նշված ծախսերը: Դրանք էին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), «Իմպիչմենտ» դաշինքը, ԱՄԿ-ն, ՀՀԿ-ն և ՀԵԿ-ը:

Միևնույն ծախսային հոդվածի դեպքում հայտարարագրերում բերված ծախսերի և մոնիտորինգային տվյալների միջև եղած տարբերությունը կարող է ունենալ մի շարք պատճառաբանություններ: Մոնիտորինգի տվյալների գերազանցումը հայտարարագրերի տվյալներին կարող է պայմանավորվել երրորդ կողմի ֆինանսավորումով, անվճար հիմունքներով մատուցած ծառայություններով, նախքան հիմնադրամի ձևավորումը կատարված ծախսերով, ինչպես նաև ծառայություններ մատուցողների կողմից որոշակի կուսակցություններին զգալի զեղչ գներով ծառայություններ մատուցելով: Չպետք է բացառել նաև հարկերը լրիվ ծավալով վճարելուց խուսափելու նպատակով ծառայություններ մատուցողների կողմից իրենց իրական եկամուտները թաքցնելու՝ երկրում լայնորեն տարածված գործելակերպը: Մոնիտորինգային տվյալների նկատմամբ հայտարարագրերի տվյալների գերազանցման հնարավոր պատճառներ կարող են լինել մոնիտորինգի իրականացումը հանրապետության միայն երեք քաղաքներում, հայտարարագրերում նշված ապրանքների և ծառայությունների ավելի բարձր գները, քան մոնիտորինգի խմբի կողմից գնահատման համար վերցված գները, և հայտարարագրում և մոնիտորինգում միևնույն անվանումն ունեցող ծախսային հոդվածի տարաբնույթ բովանդակությունը (օրինակ, «պաստառ» անվան տակ հայտարարագրում կարող են ներառված լինել ավելի մեծ տեսականիով նմանատիպ քարոզչանյութեր, քան մոնիտորինգի ենթարկված պաստառների տեսականին է):

2. Շատ դեպքերում պաշտոնապես ներկայացված հայտարարագրերում նշված չէին այն ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցեները, որոնք մուծումներ էին կատարել նախընտրական հիմնադրամներին: Սա Ընտրական օրենսգրքի 25 հոդվածի 11-րդ կետի և ԿԸՀ 2005թ. օգոստոսի 3-ի Ն37-Ն որոշման պահանջների խախտում է: Նման խախտումներ կարելի է գտնել ՄԻԱԿ-ի (միայն ֆիզիկական անձանց առումով),

«Դաշինք» կուսակցության (կուսակցության հասցեն նշված չէր), «Իմպիչմենտ» դաշինքի, ԱԺԿ-ի (կուսակցության հասցեն նշված չէր), ՀՀԿ-ի, ՕԵԿ-ի և ԲՀԿ-ի տարածքում:

«Ազգային միաբանություն» կուսակցության, Միացյալ աշխատանքային կուսակցության, «Ժողովրդավարական ուղի» կուսակցության, «Դաշինք» կուսակցության, «Նոր ժամանակներ» կուսակցության, Ազգային ժողովրդավարական կուսակցության, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» և «Ժառանգություն» կուսակցությունների (ֆիզիկական անձանց նվիրատվությունների մասով)՝ ԿԸՀ վեբ-կայքում տեղադրված նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում նվիրատվություններ կատարած ֆիզիկական անձանց լրիվ անվան ու հասցեների փոխարեն ընդամենը նշում կար հայտարարագրին կից ներկայացվող նվիրատուների ցուցակ(ներ) ի մասին: Սակայն կից ցուցակները զետեղված չէին ԿԸՀ կայքում, հետևաբար, անհնար էր պարզել, թե արդյոք այդ ցուցակներում նույնպես առկա էր նշված բացթողումը:

3. Յոթանասունութ իրավաբանական անձանցից 67-ը նվիրատվություններ էին կատարել իշխող կոալիցիայի ամենամեծ՝ Հանրապետական կուսակցության, 7-ը՝ իշխանամետ մյուս կուսակցությունների և միայն 4-ը՝ ընդդիմության տարբեր կուսակցությունների նախընտրական հիմնադրամներին: Սա հստակ, թեև անուղղակի կերպով, ցույց է տալիս Հայաստանում գործարար և քաղաքական վերնախավի սերտաճման բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ, բոլոր կուսակցությունների և մեկ դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարած ընդհանուր 397,721,764 դրամ մուծումներից 361.306.814 դրամը (կամ ընդհանուր գումարի 90,8%-ը) կատարել են ֆիզիկական անձինք: Շատ հնարավոր է, որ խոշոր բիզնեսը և օլիգարխները, անհայտ մնալու նպատակով, նվիրատվություններ են կատարել ֆիզիկական անձանց, սովորաբար՝ իրենց աշխատողների, միջոցով: Ընդդիմադիր կուսակցությունների տարածքում գործարարները այս քայլին դիմում են հարկային մարմինների կողմից «ուշադրության չարժանանալու» համար: Այսպիսով, դժվար է վեր հանել այսպես կոչված «ծառայություն ծառայության դիմաց» սկզբունքով կատարված նվիրատվությունները,

որոնք համարվում են նախընտրական քարոզչության ժամանակ դրսևորվող քաղաքական կոռուպցիայի ձև:

4. Լրատվամիջոցների հրապարակումների, հասարակական այլ կազմակերպությունների զեկույցների, ինչպես նաև անհատական դիտարկումների ուսումնասիրությամբ բացահայտվեցին վարչական ռեսուրսի չարաշահման բազմաթիվ դրվագներ: Վարչական ռեսուրսին առնչվող խախտումների բնորոշ օրինակներ են՝ պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող ունեցվածքի, շինությունների, տրանսպորտային միջոցների, ինչպես նաև նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, աշխատանքային ժամերին պետական ծառայողներին քարոզչական միջոցառումներին մասնակից դարձնելը, ընդդիմադիր կուսակցությունների և թեկնածուների գործունեությունը գրեթե բոլոր հեռուստաալիքներով բացասական ենթատեքստով ներկայացնելը, իշխանամետ թեկնածուների ու կուսակցությունների օգտին քաքնված գովազդը և այլն:

Մասնավորապես, վարչական ռեսուրսի չարաշահման հստակ օրինակ էին քարոզչության ողջ ընթացքում գործող վարչապետ Սերժ Սարգսյանի (ով նաև գլխավորում էր Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակը) աշխատանքային այցերը: Նույնը կարելի ասել նաև ՀՀԿ և ՀՅԴ անդամ նախարարների ու փոխնախարարների կողմից իրենց կուսակցությունների օգտին քարոզչություն իրականացնելու, ինչպես նաև այդ կուսակցությունների քարոզչական խմբերին մաս կազմող բժիշկների խմբերի կողմից առողջապահական ծառայություններ մատուցելու վերաբերյալ[59]:

Այս փաստերը ցույց են տալիս, որ բացահայտ կերպով խախտվել են Ընտրական օրենսգրքի 22.1 հոդվածը և Հոդված 18-ի կետ 4-ը, որով քաղաքական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող թեկնածուներին, ինչպես նաև պետական ծառայության մեջ գտնվողներին արգելվում է քարոզչությամբ զբաղվել աշխատանքային ժամերին: Միևնույն ժամանակ, պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյոք նշված դեպքերը հանդիսանում են ընտրական օրենսդրության խախտման

59 Տե՛ս www.transparency.am/monitor–archive.php?month=4+2007 և www.transparency.am/monitor–archive.php?month=5+2007 :

օրինակներ, ԿԸՀ նախագահ Գարեգին Ազարյանը պնդեց, որ օրենքը չի խախտվել, քանի որ վարչապետը, որպես պետական պաշտոնյա, կարող է քարոզչությամբ զբաղվել նաև աշխատանքային ժամերին, եթե դա չի արվում իր պաշտոնեական պարտականությունները կատարելու ժամանակ[60]:

5. Զարաշահման մեկ այլ դրսևորում էր Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) կողմից վերհանված՝ զանգվածային լրատվամիջոցներով որոշակի իրադարձությունների լուսաբանման պրակտիկան. ըստ այդմ, Հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում ակնհայտ կերպով խախտված էր հավասարակշռությունը քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող թեկնածուների գործուղումների, պաշտոնական այցերի և հանդիպումների լուսաբանման առումով[61]: Զեկույցում նշվեց, որ «ընդդիմադիր կուսակցությունների քարոզչական միջոցառումների վերաբերյալ մի շարք նյութերում առկա էին հեգնանքի տարրեր, որոնք արտացոլված չէին մոնիտորինգի քանակական ցուցանիշներում, բայց դրանք, այնուամենայնիվ, իրենց ազդեցությունն ունեցան լսարանի կողմից տեղեկատվության ընկալման վրա»[62]: Սա նույնպես Ընտրական օրենսգրքի 22.1 հոդվածի դրույթների բացահայտ խախտում էր:

6. Լրատվամիջոցները, տեղական դիտորդները, ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները զեկուցել են այն մարդկանց կողմից վարչական ռեսուրսի անուղղակի օգտագործման դեպքերի մասին, ովքեր, չլինելով պետական պաշտոնյաներ կամ պետական հիմնարկությունների աշխատակիցներ, սերտ կապի մեջ էին իշխանությունների հետ: Դրանք այն դեպքերն էին, երբ օլիգարխների, նրանց թեկնածուների, քաղաքային հեղինակությունների և այլոց գործողությունները նպաստում էին իշխող քաղաքական ուժերի շահերին[63]: Նշվում էր նաև ընտրողներին

60 Տե՛ս «Հայկական ժամանակ» օրաթերթի 2007թ. ապրիլի 19-ի համարը (www.hzh.am/Arkhiv/2007/April/20.04/20.04.07.html):

61 Տե՛ս ԵՄԱ զեկույցը www.ypc.am/Old/Downlowds/Reports/report-2007-arm.pdf կայքում, էջ 35:

62 Նույն տեղում, էջ 33:

63 Տե՛ս www.transparency.am/monitor–archive.php?month=4+2007 և www.transparency.am/monitor–archive.php?month=5+2007 :

ու ընտրական հանձնաժողովների անդամերին կաշառելու լայնորեն տարածված գործելակերպի մասին՝ առավելապես հիշատակելով Հանրապետական և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները, ինչպես նաև այդ կուսակցությունների կես կապված կոնկրետ օլիգարխներին[64]: Դիտորդական առաքելություն իրականացնող տեղական հասարակական կազմակերպությունները մատնանշում էին նաև քարոզչության խոչընդոտման, վաղ քարոզչության և այլ դեպքերի մասին[65]:

## *2008թ. նախագահական ընտրությունները*

2008թ. նախագահական ընտրությունների քարոզչությանն առնչվող խախտումներն ու թերությունները հիմնականում նման էին 2007թ. խորհրդարանական ընտրությունների խախտումներին ու թերություններին:

1. Նախընտրական հիմնադրամ ձևավորած նախագահական 8 թեկնածուներից[66] 4-ի դեպքում մոնիտորինգի տվյալները էապես (ավելի քան 10%-ով) գերազանցել էին հայտարարագրերում բերված տվյալները: Դրանք էին Սերժ Սարգսյանը, Արտաշես Գեղամյանը, Վահան Հովհաննեսյանը և Լևոն Տեր-Պետրոսյանը[67]: Մոնիտորինգի տվյալների համաձայն երկու թեկնածուներ՝ Սերժ Սարգսյանը (93 մլն. դրամ) և Վահան Հովհաննիսյանը (85.4 մլն. դրամ), գերազանցել էին նախընտրական հիմնադրամի թույլատրելի 70 միլիոն դրամի սահմանը, որը սահմանված է Ընտրական օրենսգրքի 79 հոդվածի 4-րդ կետով:
Ինչպես և 2007թ. խարհրդարանական ընտրությունների ժամանակ, հնարավոր չեղավ իրականացնել մոնիտորինգի և նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում բերված տվյալների համապարփակ համեմատական վերլուծություն: Պատճառները

64 Նույն տեղում:

65 Տե՛ս www.iyc.am/docs/Report–arm.doc և www.hcav.am/Downloads/HCA–Vanadzor–Report–on–Elections–2007.pdf :

66 Նախագահական թեկնածու Արման Մելիքյանը նախընտրական հիմնադրամ չէր ձևավորել:

67 Մոնիտորինգի տվյալները գերազանցել էին նաև նախագահական թեկնածու Տիգրան Կարապետյանի նախընտրական հիմնադրամի հայտարարագրում բերված տվյալները, սակայն այդ գերազանցումը 10%-ից պակաս էր:

նույնպես նույնն էին, ինչ 2007թ. ընտրությունների ժամանակ. ծախսային հոդվածների անվանումների անորոշ ձևակերպումներ (ինչպիսիք են, օրինակ, «տպագրական ծախսեր»-ը Արամ Հարությունյանի մոտ կամ «ծառայությունների համար վճարումներ»-ն Արտաշես Գեղամյանի հայտարարագրերում), ծախսային հոդվածի մեկ անվանման տակ մեկից ավելի ծախսերի ներառումը (օրինակ Սերժ Սարգսյանի, Արթուր Բաղդասարյանի և Վահան Հովհաննեսյանի հայտարարագրերում միասին էին ներկայացված վճարովի եթերաժամի և հեռուստաեսային գովազդային հոլովակների վրա կատարված ծախսերը) և այլն: Նույն պատճառաբանությունները, ինչպես խորհրդարանային ընտրությունների դեպքում, կիրառելի են նաև որոշակի ծախսային հոդվածների դեպքում մոնիտորինգի և հայտարարագրերի սյունակների միջև տարբերությունները մեկնաբանելիս, այն է՝ երրորդ կողմի ֆինանսավորում, անվճար հիմունքներով ծառայությունների մատուցում, ծախսերի կատարում նախքան նախընտրական հիմնադրամ ձևավորելը, մեծ զեղչերի առկայություն, ապրանքների և ծառայությունների ավելի բարձր գներ, քան մոնիտորինգի խումբն էր կիրառել իր հաշվարկներում, միևնույն անվանմամբ ծախսային հոդվածի տարաբնույթ բովանդակություն հայտարարագրերի և մոնիտորինգի սյունակներում:

2. Նախագահական թեկնածու Արամ Հարությունյանի նախընտրական հիմնադրամի հայտարարագրում բացակայում էին մուծումներ կատարած ֆիզիկական անձանց հասցեները: Նույն խնդիրն առկա էր նաև Արթուր Բաղդասարյանի նախընտրական հիմնադրամին մուծումներ կատարած 25 (194-ից) ֆիզիկական անձանց պարագայում: Սրանք ԿԸՀ-ի 2005թ. օգոստոսի 3-ի N37-N որոշման պահանջների խախտումներ են: Վահան Հովհաննեսյանի նախընտրական հիմնադրամի հայտարարագրում նշում կար կից ներկայացվող նվիրատուների ցուցակի մասին, բայց այդ կից ցուցակը տեղ չէր գտել ԿԸՀ ինտերնետ կայքում և այդ տեղեկատվությունը չէր կարող ստուգվել: Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական հիմնադրամին նվիրատվություն կատարած բազմաթիվ ֆիզիկական անձանց հասցեները նույնպես բացակայում էին, սակայն դրանց փոխարեն ներկայացված էին անձնագրային սյունակները (համարը,

տրման ամսաթիվը, ծննդյան ամսաթիվը և/կամ անձնագիրը տվող ղեկավար մարմնի ծածկագիրը):

3. 133 իրավաբանական անձանցից (բացի թեկնածուներին առաջադրած կուսակցություններից) 130-ը մուծումներ են կատարել այն ժամանակ գործող վարչապետ և Հանրապետական կուսակցության առաջնորդ Սերժ Սարգսյանի հիմնադրամին, 2-ը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, իսկ 1-ը՝ Վահան Հովհաննեսյանի հիմնադրամներին: Սա Հայաստանում գործարար և քաղաքական վերնախավի սերտաճման ևս մեկ ցուցանիշ է: Այս ընտրությունների ժամանակ ևս, ընդդիմադիր թեկնածուների դարագայում, գործարարներն ամենայն հավանականությամբ փորձում էին թաքցնել իրենց քաղաքական նախասիրությունները՝ մուծումներ կատարելով ֆիզիկական անձանց միջոցով: Նախընտրական և հետընտրական զարգացումներն ապացուցեցին, որ առկա էր դաժվելու մեծ ռիսկ՝ Լևոն Տեր-Պետրոսյանին աջակցելու համար:
Լևոն Տեր-Պետրոսյանին բացահայտորեն աջակցած միակ խոշոր գործարար Խաչատուր Սուքիասյանի դեպքը ցույց տվեց ընդդիմությանն աջակցելուց բխող բոլոր բացասական հետևանքները: Դեռևս նախընտրական ժամանակաշրջանում իշխանությունները պարոն Սուքիասյանին մեղադրեցին հարկերից խուսափելու մեջ[68], որի արդյունքում նրան պատկանող որոշ ընկերություններ փակվեցին (օրինակ, հանքային և սեղանի ջրեր արտադրող «Բջնի» ընկերության սպիրտային փակումը): Ներկայումս պարոն Սուքիասյանը գտնվում է փախուստի մեջ՝ խուսափելու համար մարտի 1-ի դեպքերի հետ կապված՝ նրա դեմ հարուցված քրեական գործից:

4. Լրատվամիջոցների լուսաբանումից և այլ դիտորդական առաքելությունների զեկույցներից երևում է, որ 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ վարչական ռեսուրսների չարաշահման ամենատարածված ձևը հիմնականում կապված էր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքապետարաններ, նախարարություններ) և պետական հիմնարկների (դպրոցներ,

68 Տե՛ս «Ազատություն» ռադիոկայանի կայքէջի արխիվային նյութերը 2007թ հոկտեմբերից մինչև 2008 թ. առաջին կիսամյակը:

համալսարաններ, հիվանդանոցներ և այլն) գործունեության հետ, որոնք իրենց ռեսուրսներն օգտագործում էին գործող վարչապետ Սերժ Սարգսյանի օգտին: Արձանագրվեցին դասերի ժամանակ ու աշխատանքային ժամերին դպրոցականների, ուսուցիչների, բժիշկների, քաղաքապետարանների և այլ պետական ու հանրային հիմնարկների աշխատակիցների սիրողական մասնակցության դեպքեր այն ժամանակվա վարչապետ Սերժ Սարգսյանի նախընտրական միջոցառումներում, համայնքապետարանների աշխատակիցների կողմից քաղաքացիների անձնագրային տվյալների հավաքման դեպքեր և այլ խախտումներ[69]: Այս գործելակերպն ուղղակիորեն խախտում է ԸՕ 18 հոդվածի դրույթները:

ԸՕ 18 և 22.1 հոդվածների մեկ այլ խախտում էր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, ինչպես նաև քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող պաշտոնյաների կամ պետական ծառայության մեջ գտնվող թեկնածուների տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ներգրավումը նախընտրական քարոզչության մեջ: Այն ժամանակվա վարչապետ Սերժ Սարգսյանն օգտագործեց իր պաշտոնեական դիրքը՝ ազդելու ընտրողների վրա, չարաշահեց պետական պաշտոնյաների աջակցությունը, որոնք առանց արձակուրդ վերցնելու մասնակցում կամ ուղեկցում էին նրան իր նախընտրական միջոցառումների ժամանակ և այլն:

Լրատվամիջոցների կողմնակալությունը ևս մեկ հիմնախնդիր էր, որն ի հայտ եկավ 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Համաձայն լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքների՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով նախագահական ընտրությունների լուսաբանման մեջ առկա էր ակնհայտ և պարզորոշ անհավասարակշռություն հօգուտ Սերժ Սարգսյանի, որն ուներ մեծ առավելություն իր մրցակիցների նկատմամբ՝ շնորհիվ նշված լրատվամիջոցների կողմից իր գործունեության շատ դրական և լայն լուսաբանման, մանավանդ, համեմատած իր հիմնական հակառակորդ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ[70]: Հասկանալի է, որ ՀՌԱՀ-ը, որը օրենքով

69 Տե՛ս www.transparency.am/monitor–archive.php?month=4+2007 և www.transparency.am/monitor–archive.php?month=5+2007 :

70 Տե՛ս www.ypc.am/downloads/Elections–report-2008-arm.pdf :

լիազորված է հետևելու լրատվամիջոցների և հիմնականում՝ Հանրային հեռուստատեսության ու ռադիոյի կողմից սահմանված պահանջների պահպանմանը, կա՛մ մերժում էր իրեն ուղղված բոլոր դիմումները, կա՛մ՝ տալիս ձևական պատասխաններ՝ առանց պատժելու խախտողներին[71]:

5. Այս ընտրությունների ժամանակ ևս տեղական ՀԿ-ները և ընդդիմադիր մամուլը ներկայացրին վաղ քարոզչության, քարոզչությանը խոչընդոտներ հարուցելու և այլ ընտրախախտումների բազմաթիվ դեպքեր[72]: Ընդդիմադիր ակտիվիստները և լրատվամիջոցները արձանագրեցին թեկնածու Սերժ Սարգսյանի օգտին քվերակելու համար ընտրակաշառքի բաժանման բազմաթիվ դեպքեր[73]: Այդ ընտրակաշառքները բաժանվում էին փողի, սննդային կտրոնների, նախընտրական շտաբների կողմից քաղաքացիների կոմունալ ծախսերի վճարումների, շենքերի և ճանապարհների վերանորոգման և այլ տեսքով:

## *Ընտրական օրենսդրության մեջ բացահայտված բացթողումների վերլուծությունը*

2007 և 2008 թվականների նախընտրական քարոզչության մոնիտորինգն օգնեց վեր հանելու քարոզչության անցկացման, քարոզչության ֆինանսավորման և վարչական ռեսուրսների օգտագործման առումով օրենսդրական մի շարք բացթողումներ:

- Ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, որոնք, համաձայն ԸՕ 25 հոդվածի 11-րդ կետի, պետք է կցվեն նախընտրական հիմնադրամների հայտարարագրերին, այնպես են տեղադրված ԿԸՀ վեբ-կայքում, որ հնարավոր չէ ո՛չ պարզել ծառայություններ կամ ապրանքներ մատուցած ընկերությունների ինքնությունը, ո՛չ էլ արդյունավետ կերպով ստուգել թեկնածուների և կուսակցությունների/դաշինքների քարոզչության

71 Տե՛ս www.ypc.am/downloads/Elections–report-2008-arm.pdf և www.osce.org/documents/odihr/2008/05/31397–hy.pdf :

72 Տե՛ս www.iyc.am/docs/Pres%20final%20report%202008–arm.doc, www.hcav.am/Downloads/postelectinons–arm.pdf և www.asparez.am/news/archive/archive-4-feb-2008.htm :

73 Տե՛ս www.transparency.am/monitor–archive–2008.php?month=1+2008 և www.transparency.am/monitor–archive–2008.php?month=2+2008 :

ծախսերի օրինականությունը:

- Ընտրական օրենսգիրքը հստակորեն արգելում է նախընտրական քարոզչությունը միայն երկու օրերին` քվեարկության և դրան նախորդող օրը (տե՛ս ԸՕ 18 և 23 հոդվածները): Միևնույն ժամանակ, օրենսգրքում համապատասխան բովանդակային սահմանման բացակայության պատճառով, վաղ քարոզչությամբ (քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ) զբաղվելն առհասարակ կարգավորված չէ: Այն փաստը, որ օրենսդրությունը չի սահմանում, թե ինչ է նախընտրական քարոզչությունը, շատ կուսակցությունների և թեկնածուների համար ստեղծում է կոռուպցիոն հնարավորություններ` անպատիժ օգտագործելու այս սողանցքը վաղ քարոզչության համար: Ավելին, լիազոր մեսական պաշտոնյաները, արձագանքելով այս առնչությամբ հնչած բողոքներին, սովորաբար նշում են համապատասխան իրավական կարգավորման բացակայությունը:
- Մարզային հեռուստաընկերությունների մեծ մասը չհրապարակեց վճարովի եթերաժամի մեկ րոպեի իրենց սահմանած գինը, ինչպես դա նախատեսվում է ԸՕ Հոդված 20-ի 4 և 5 կետերով: Փոխարենը, նրանք քարոզչության մեկնարկից առաջ հայտարարեցին, որ իրենք առհասարակ չեն լուսաբանելու քարոզչության հետ կապված միջոցառումները: Միևնույն ժամանակ, քարոզչության ընթացքում այդ հեռուստաընկերությունները հրավիրում էին իրենց համակրած թեկնածուներին ու կուսակցությունների ներկայացուցիչներին մասնակցելու իրենց հաղորդումներում` դրանով իսկ ապահովելով վերջիններիս թաքնված գովազդը: Բացի այդ, բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններ ապահովելու պահանջը բավականին անորոշ է ձևակերպված թերթերի պարագայում (տե՛ս ԸՕ 20 հոդվածի 10-րդ կետը)` ի տարբերություն հեռուստառադիոընկերությունների, որոնց պարտադրվում է եթերաժամանակը վաճառել նախապես հրապարակված` սահմանված սակագնով (տե՛ս օրենսգրքի 20 հոդվածի 4-րդ կետը):
- Ընտրական օրենսգրքում լուրջ թերություններ կան նաև քարոզարշավի ֆինանսավորման առումով: ԸՕ ոչ մի հոդված չի պարունակում որևէ դրույթ թեկնածուներին և կուսակցություններին անվճար հիմունքներով կամ զեղչ գներով ապրանքների կամ ծառայություններ մատուցումը,

երրորդ անձանց կողմից ֆինանսավորումը կանխելու վերաբերյալ: Հստակ չէ, թե ԿԸՀ-ն ինչպես է հետամնելու թեկնածուների կամ կուսակցությունների կողմից իրենց նախընտրական հիմնադրամների միջոցներից դուրս եղած այլ միջոցների օգտագործման դեպքերը: Սա հատկապես վերաբերում է կուսակցություններին, քանի որ ԿԸՀ-ն կուսակցությունների կողմից արդարադատության նախարարություն ներկայացված ֆինանսական հաշվետվությունները ստուգելու իրավասություն չունի: Ավելին, քանի որ այդ հաշվետվությունները ներկայացվում են տարեկան կտրվածքով, իսկ տվյալ տարվա ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու վերջնաժամկետը հաջորդ տարվա մարտի 25-ն է, կուսակցությունների հաշվեհամարներից քարոզչության արտօրինի ֆինանսավորման դեպքում արդեն չափազանց ուշ կլինի այդ տեղեկատվությունն օգտագործել ընտրությունների արդյունքները չեղյալ համարելու համար:

- Ընտրական օրենսգրքությունը չի տալիս հստակ մեկնաբանություն «պետական ծառայություն» հասկացությանը, որը տալիս է էական առավելություններ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող թեկնածուներին: Համաձայն ԸՕ 78 հոդվածի 1-ին կետի՝ պետական ծառայության մեջ գտնվող Նախագահի թեկնածուները պետք է ազատվեն իրենց աշխատանքային պարտականություններից, բացառությամբ ՀՀ գործող Նախագահի կամ Նախագահի պաշտոնակատարի, որոնք շարունակում են կատարել իրենց պարտականությունները, բայց առանց օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքի առավելությունները: Նմանատիպ դրույթներ է պարունակում նաև ԸՕ 111 հոդվածի 1-ին կետը ԱԺ պատգամավորական թեկնածուների և 138.14 հոդվածի 1-ին կետը՝ Երևանի ավագանու անդամի թեկնածուների համար: Այն դեպքում, երբ որոշ փորձագետներ համոզված են, որ նշված արգելքը վերաբերում է առանց բացառության պետական բոլոր պաշտոնյաներին, ովքեր գտնվում են պետական ծառայության մեջ, անկախ այն հանգամանքից, թե իրենք ինչ պաշտոններ են վարում, ԿԸՀ-ն մատնանշում է անում «Քաղաքացիական ծառայության մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն քաղաքական և հայեցողական պաշտոնները ներառված չեն պետական

կամ համայնքային պաշտոնների անվանացանկում, և հետևաբար ազատ են կատարելու քարոզչություն՝ շարունակելով կատարել իրենց աշխատանքային պարտականությունները[74]:

- Ընտրական օրենսգրքի որևէ հոդված չի կանխում թեկնածուի կողմից պետական ու համայնքային այն ռեսուրսների օգտագործումը, որոնք, պաշտոնապես չգտնվելով այդ թեկնածուի տնօրինման տակ, տնօրինվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

74 Իր 2008թ. փետրվարի 9-ի N16 որոշմամբ ԿԸՀ-ն տվել է իր պաշտոնական մեկնաբանությունը ԸՕ 78 հոդվածի 1-ին կետի վերաբերյալ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգը բացահայտեց քարոզչության ֆինանսավորման հետ կապված մեծաքանակ հիմնախնդիրներ, ինչպես նաև վարչական ռեսուրսի զանգվածային չարաշահումներ: Թեև Հայաստանի ընտրական օրենսդրության մեջ առկա բացթողումները նպաստեցին վերը նկարագրված արատավոր երևույթների դրսևորմանը, բայց հիմնական գործոնները պետք է փնտրել օրենսդրության ոլորտից դուրս:

Հայ հասարակության, քաղաքական գործիչների, փորձագետների և լրագրողների շրջանում ընդհանուր համաձայնություն կա այն հարցում, որ Հայաստանում երբևէ եղած լավագույն ընտրությունները եղել են 1990թ. (խորհրդարանական) և 1991թ (նախագահական) ընտրությունները: Հետաքրքրական է, որ այդ ժամանակվա ընտրական օրենսդրությունը շատ ավելի մեծ բացեր ու թերություններ ուներ, քան այսօրվանը: Մինչդեռ, 2007թ. և 2008թ. քարոզչության ընթացքում նկատված խախտումները հիմնականում տեղի ունեցան հենց գործող օրենսդրության դրույթների դիտավորյալ և բացահայտ խախտումների, և ոչ թե օրենսդրության բացերի ու անորոշությունների օգտագործման միջոցով:

Ընտրությունների անցկացման վրա ազդող հիմնական գործոնը ***Հայաստանում գործարար և քաղաքական վերնախավերի սերտաճման շատ բարձր աստիճանն է:*** Արդյունքում, ընտրությունների ժամանակ պարտությունը կարող է հանգեցնել քաղաքական վերնախավի ոչ միայն քաղաքական, այլ նաև հսկայական տնտեսական իշխանության կորստին, քանի որ գոյություն ունի ընտրություններից հետո սեփականությունը հաղթողի օգտին վերաբաշխելու մեծ ռիսկ: Այդպիսի վերաբաշխումը հնարավոր է սեփականության իրավունքի վատ պաշտպանվածության, իշխանության դատական և օրենսդիր ճյուղերի անկախության բացակայության, ինչպես նաև քաղաքական իշխանությունը հանուն անձնական հարստացման օգտագործելու ցինիկ գործելակերպի պատճառով:

Այս առումով ուշադրության արժանի առանցքային մեկ այլ գործոն է ***ավտորիտար կառավարման համակարգի կոնսոլիդացիան***: Այս միտումի

մասին նշում են ոչ միայն տեղական փորձագետները, այլև միջազգային կազմակերպությունները, մասնավորապես Համաշխարհային բանկը[75], Ֆրիդոմ Հաուսը[76] և ուրիշները: Այնպիսի ցուցանիշների գծով նախանշը, ինչպիսիք են *Ժողովրդի ձայնը և հաշվետվողականությունը, Օրենքի գերակայությունը, Քաղաքացիական ազատությունները և Քաղաքական իրավունքները, Լրատվամիջոցների նկատմամբ վերահսկողությունը*, հստակ կերպով վկայում է այդ կոնսոլիդացիայի մասին: Ավտորիտար կառավարման այս կոնսոլիդացիան և քաղաքական ու տնտեսական վերնախավերի սերտաճումը հանգեցրել են Հայաստանում առհասարակ որևէ իրական քաղաքական մրցակցության վերացմանը:

Քաղաքական և գործարար վերնախավերի սերտաճման բարձր մակարդակը, ինչպես նաև բնակչության հիմնական մասի ցածր կենսամակարդակը ***ընդդիմության ուժերի համար անհնար են դարձնում նախընտրական քարոզչության ժամանակ էական ֆինանսական աջակցություն ստանալու հնարավորությունը:*** Հազվադեպ դեպքերում, ինչպես օրինակ 2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ բիզնեսը փորձեց աջակցել ընդդիմության թեկնածուներին, իշխանություններն անմիջապես կոշտ բռնություններ կիրառեցին նրանց դեմ, այդ թվում՝ ձերբակալություններ ու քրեական հետապնդումներ: Նման պայմաններում ընդդիմադիր կուսակցություններն ու թեկնածուները չէին կարող լրջորեն պայքարել իշխող քաղաքական ուժերի դեմ: Այսօր էլ նրանք, ովքեր, այնուամենայնիվ, շարունակում են աջակցել ընդդիմությանը, մշտական հետապնդումների ու սպառնալիքների թիրախ են դառնում, կորցնում են իրենց աշխատանքն ու բիզնեսը:

Մեկ այլ վճռորոշ գործոն է նաև երկրում ***ստվերային տնտեսության և կոռուպցիայի բարձր մակարդակը***, որը կարելի է դիտարկել թե՛ որպես սերտաճած վերնախավի ու կոնսոլիդացված ավտորիտար կառավարման պատճառ, և թե՛ որպես դրանց հետևանք: Ակնհայտ է, որ դրանք ազդում են ընտրական համակարգի վրա այնպես, ինչպես և մնացած բոլոր հաստատությունների վրա: Կոռուպցիոն գործելակերպը, ինչպես օրինակ

75 Տե՛ս info.worldbank.org/governance/wgi/sc–chart.asp :

76 Տե՛ս *Freedom in the World (Ազատությունն աշխարհում)* 2002-08թթ. հրապարակումները (www.freedomhouse.org/template.cfm?page=15) և *Nations in Transit (Պետությունները անցումային փուլում)* 2003-08թթ. հրապարակումները (www.feedomhouse.org/template.cfm?page=17&year=2008):

ընտրակաշառքը, ընտրական հանձնաժողովների անդամներին կաշառելը, քաղաքական պաշտոններ զբաղեցնողների կողմից իրենց պաշտոնեական դիրքի չարաշահումը, խորհրդարանում տեղերի վաճառքը, կեղծ հայտարարագրերի միջոցով գույքի և եկամուտների իրական չափերը թաքցնելը այսօրվա հայաստանյան ընտրական գործընթացների նորմ են դարձել:

Վերոնշյալ տնտեսական և քաղաքական գործոնների շարունակական գոյությունը գրեթե ամբողջությամբ ի չիք է դարձրել գործող ընտրական օրենսդրության բարելավման հետ կապված ամբողջ դրական արդյունքը, որը ձեռք էր բերվել Ընտրական օրենսգրքի՝ 2002, 2005, 2006 և 2007 թվականներին կատարված մեծածավալ փոփոխությունների ու լրացումների շնորհիվ: Ներկա ընտրական օրենսդրությունը ձևական առումով որոշակի երաշխիքներ է ապահովում քարոզչության ֆինանսավորման հետ կապված քաղաքական կոռուպցիայի այնպիսի դրսևորումների դեմ, ինչպիսիք են «ծառայություն ծառայության դիմաց» սկզբունքով կատարվող նվիրատվությունները, ընտրակաշառքը և վարչական ռեսուրսի չարաշահումը: Սակայն ընտրությունների փորձը ցույց է տալիս, որ այդ երաշխիքները արդյունավետ չեն գործում, իսկ որոշ դեպքերում առհասարակ չեն գործում:

Ասվածը չի նշանակում, թե գործող օրենսդրության հետագա բարելավման անհրաժեշտություն չկա: Հարցն այն է, թե ինչպես պետք է ապահովել գոյություն ունեցող օրենսդրության փաստացի կիրառումը: Քանի դեռ հասարակությանն ու կուսակցություններին առանց որևէ խտրականության թույլ չի տրվում ավելի ակտիվորեն ներգրավվել ընտրական գործընթացներում, իսկ իշխանությունները չեն ստանձնում ընտրական օրենսդրության խախտումների համար ողջ պատասխանատվությունը, քաղաքական կոռուպցիան շարունակելու է ծաղկել ընտրական համակարգում՝ առհասարակ, և քարոզչության ֆինանսավորման ոլորտում՝ մասնավորապես:

Հետևաբար, քարոզչության ֆինանսավորման գործընթացի կարգավորումն ավելի արդյունավետ դարձնելու հարցում առանցքային առաջնահերթություններից մեկն այդ գործընթացի վերահսկողության և կառավարման թափանցիկության, հաշվետվողականության ու հանրային մասնակցության ընդլայնումն է: Այս առումով **առաջին առաջարկությունը ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (ՎՎԾ) կառուցվածքի, լիազորությունների և գործառույթների մեջ արմատական փոփոխություններ մտցնելն է:** Մասնավորապես.

- այդ ծառայության աշխատակազմի առնվազն կեսը պետք է լինեն քաղաքացիական հասարակության և ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ,
- ՎՎԾ-ն պետք է ունենա շատ ավելի մեծ և ավելի պրոֆեսիոնալ աշխատակազմ և մանածյուղեր հանրապետության բոլոր մարզերում,
- այն պետք է նաև համագործակցի իր կազմից դուրս գտնվող հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների հետ, և նրա գործունեությունը պետք է լինի թափանցիկ և հաշվետու: Օրինակ, նախընտրական քարոզչության ժամանակ առնվազն շաբաթը մեկ անգամ ՎՎԾ-ն հասարակությանը պետք է հաշվետվություն տա նախընտրական հիմնադրամների ֆինանսական հոսքերի մասին, և նրա նիստերի բոլոր արձանագրությունները պետք է տեղադրվեն www.elections.am վեբ-կայքում՝ ցույց տալով նաև նրա ընդունած որոշումների շուրջ քվեարկության արդյունքները:
- ՎՎԾ-ն պետք է առանձնանացվի ԿԸՀ-ից՝ դառնալով անկախ ու ֆինանսապես կայուն մարմին: «*Ծառայություն ծառայության դիմաց*» սկզբունքով նվիրատվությունների, ոչ դրամային կեղծ ներդրումների, երրորդ անձանց կողմից ֆինանսավորման հնարավոր դեպքերը և նախընտրական քարոզչության ֆինանսավորման այլ խախտումները հետաքննելու համար ՎՎԾ-ն պետք է ունենա հետաքննական գործառույթներ իրականացնելու լիազորություն:

**Երկրորդ առաջարկությունը նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի ծախսային մասի տողերի մանրամասնումն է**:

- Պետք է նշվի նաև նվիրատվություններ կատարած ֆիզիկական անձանց գործատու ընկերության (հիմնարկի) անվանումը և հասցեն:
- Ծախսերի տեսակները պարտադիր կարգով պետք է ներկայացվեն ավելի մանրամասն՝ ներառելու համար սահմանված բոլոր տեսակները (այն է՝ բոլոր տեսակի տպագիր նյութերը, քարոզչության ժամանակ իրականացված բոլոր այցելությունների ծախսերը, քարոզչական գովազդի վրա կատարված ծախսերը, գնված եթերաժամի համար վճարված գումարը և այլն), ինչպես նաև ծառայություն մատուցողների կամ քարոզչական նյութեր արտադրողների ինքնությունը:

- Անհրաժեշտ է հստակեցնել, թե նախընտրական հիմնադրամի հայտարարագրին ինչ փաստաթղթեր է անհրաժեշտ կցել՝ քարոզչական ծախսերի տողերը ստուգելու և ԿԸՀ վեբ-կայքում տեղադրելու (կամ հանրության համար դրանց մատչելիությունն այլ կերպ ապահովելու) համար:

**<u>Երրորդ առաջարկությունը</u> Ընտրական օրենսգրքում «նախընտրական քարոզչության» հստակսահմանումն է՝ հիմնվելով նրա բովանդակության, և ոչ թե թեկնածուների և կուսակցությունների/դաշինքների գրանցման պահի վրա՝ կանխելու համար վաղ քարոզչությունը[77]:**

**<u>Չորրորդ առաջարկությունն</u> Ընտրական օրենսգրքում քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ թերթի մեկ սմ$^2$ մակերեսի սակագնի պարտադիր հայտարարելու պահանջը ներառելն է**:

**<u>Հինգերորդ առաջարկությունն</u> ուղղված է երրորդ կողմի ֆինանսավորման, թեկնածուներին և կուսակցություններին/դաշինքներին անվճար հիմունքներով կամ զեղչ գներով ապրանքների և ծառայությունների մատուցման երևույթների կարգավորմանը**.

- ԸՕ 25 հոդվածը պետք է լրացվի այնպիսի դրույթներով, որոնք կպարտավորեցնեն երրորդ անձանց ֆինանսավորման, ինչպես նաև անվճար հիմունքներով ծառայությունների մատուցման հնարավոր բոլոր դեպքերի հայտարարագրումը,
- համապետական ընտրությունների տարիներին կուսակցություններից (թեկնածուներից) պետք է պահանջել արդարադատության նախարարություն ներկայացնել կիսամյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնք կներառեն այն եռամսյակը, երբ տեղի են ունեցել նախընտրական քարոզչությունը և ընտրությունների օրը և այն եռամսյակը, որը նախորդում է այդ եռամսյակին,
- «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածում պետք է նախանշանավորվեն (ինչպես դա արվում է նախընտրական

77 Ներկայումս, ըստ ԸՕ 18 հոդվածի 5-րդ կետի, քարոզչությունը պաշտոնապես սկսվում է կուսակցությունների և թեկնածուների գրանցման համար նախատեսված վերջնաժամկետին հաջորդող օրը:

հիմնադրամների հայտարարագրերի դեմքում) կուսակցությունների բոլոր նշանակալի ծախսային և եկամտային հոդվածները:

**Վեցերորդ առաջարկությունն** է Ընտրական օրենսգրքում և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում ներառել քարոզչությանը և նրա ֆինանսավորմանը առնչվող՝ ԸՕ 139 հոդվածում նշված բոլոր 7 ընտրախախտումների մասին հստակ ձևակերպված կոնկրետ դրույթներ:

**Յոթերորդ առաջարկությամբ** Ընտրական օրենագիրքը պետք է նախընտրական շրջանում անխտիր բոլոր պետական պաշտոնյաների պարտականությունների ժամանակավոր դադարեցման հստակ պահանջ դնի՝ նրանց՝ պատգամավորական կամ նախագահական թեկնածու գրանցվելու դեպքում:

**Ութերորդ առաջարկությամբ** Ընտրական օրենսգրքով հստակ կերպով պետք է արգելվի ոչ միայն պետական պաշտոնյա հանդիսացող թեկնածուների կողմից իրենց հասկացված շինությունների, տրանսպորտային միջոցների, հաղորդակցության միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, այլ նաև որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության ներքո գտնվող այլ վարչական ռեսուրսների օգտագործումը, որոնք ուղղակիորեն չեն տնօրինվում այդ թեկնածուների կողմից:

## Հավելված 1. 2007թ. խորհրդարանական ընտրություններ. կուսակցությունների/դաշինքների ծախսերի համեմատական տվյալները

### *Ազգային ժողովրդավարական կուսակցություն*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ծախսի տեսակը*** | ***Ծախսի չափը*** | ***Ծախսի տեսակը*** | ***Ծախսի չափը*** |
| 1 | Բուկլետի տպագրման վճար | 800,000 | Բուկլետների տպագրություն | 800,000 |
| 2 | Տեսանյութերի պատրաստման վճար | 250,000 | Տեսանյութեր[78] | 1,584,000 |
| 3 | Գովազդի տեղադրման վճար | 50,000 | | |
| 4 | Քաղաքական գովազդի վճար | 13,161,147 | | |
| 5 | Տարածքի վարձավճար | 20,000 | | |
| 6 | Կազմակերպչական ծախսեր | 18,000 | | |
| 7 | | | Վճարովի եթեր | 7,281,833 |
| 8 | | | Նախընտրական ծրագրի տպագրություն | 135,000 |
| 9 | | | Ռուսերեն թռուցիկների տպագրություն | 35,000 |
| | **Ընդհանուր** | **14,299,147** | **Ընդհանուր** | **9,835,833** |

### *«Ազգային համաձայնություն» կուսակցություն*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| ***N*** | ***Ծախսի տեսակը*** | ***Ծախսի չափը*** | ***Ծախսի տեսակը*** | ***Ծախսի չափը*** |
| 1 | Քարոզարշավի ծախսեր | 84,000 | | |
| 2 | Տեղեկագիր | 50,000 | | |
| 3 | Տեսանյութերի նկարահանում | 88,000 | Տեսանյութեր | 666,000 |
| 4 | Տեսանյութերի մոնտաժում | 88,000 | | |
| 5 | Վճարովի եթերաժամ | | Վճարովի եթեր | 130,000 |
| | **Ընդհանուր** | **430,000** | **Ընդհանուր** | **796,000** |

### *«Ազգային միաբանություն» կուսակցություն*

78 Մոնիտորինգի խումբը գնահատել է միայն Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակված գովազդային տեսանյութերի արժեքը:

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Տպագրական աշխատանքներ | 250,000 | | |
| 2 | Օրագրի և բուկլետի տպագրում | 926,000 | Օրագրի և բուկլետի տպագրություն | 1,100,000 |
| 3 | Ծառայությունների մատուցում | 7,890,000 | | |
| 4 | Էլեկտրաէներգիայի վարձ | 112,000 | | |
| 5 | Հեռախոսային խոսակցության վարձ | 240,000 | | |
| 6 | Գրասենյակային գրենական պարագաներ | 121,000 | | |
| 7 | Դահլիճի վարձավճար | 190,000 | | |
| 8 | Քաղաքական գովազդ | 10,740,000 | | |
| 9 | Ուղիղ եթերով հայտարարություն | 320,000 | | |
| 10 | Հայտարարության համար | 520,000 | | |
| 11 | Գովազդային արտադրանք | 248,000 | | |
| 12 | Նկարահանման հեռարձակման | 300,000 | | |
| 13 | Թույլատրության համար | 14,000 | | |
| 14 | | | Օրացույցների տպագրություն | 200,000 |
| 15 | | | Պաստառների տպագրություն | 372,800 |
| 16 | | | Վճարովի եթեր | 14,605,834 |
| 17 | | | Տեսանյութեր | 1,134,000 |
| | **Ընդհանուր** | **21,871,000** | **Ընդհանուր** | **17,411,834** |

## *«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Բուկլետների գնում | 660,000 | Բուկլետների տպագրություն | 1,105,000 |
| 2 | Գովազդի պաստառ | 60,000 | | |
| 3 | Գովազդային վահանակի գնում | 80,000 | Վահանակների պատրաստում և տեղադրում | 5,988,313 |
| 4 | Նախընտրական գովազդ | 35,367,800 | | |
| 5 | Գովազդի տուրք | 45,000 | | |
| 6 | Նախընտրական քարոզչություն | 9,882,000 | | |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սկյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 7 | Սահմանված չափից ավել մուծված գումարի փոխանցում պետական բյուջե կամ մուծված գումարների ետ վերադարձ նվիրատուներին | 550,000 | | |
| 8 | Գովազդի տեղաբաշխման թույլտվության համար | 20,000 | | |
| 9 | | | Պաստառներ | 10,905,220 |
| 10 | | | Վճարովի եթեր | 16,296,700 |
| 11 | | | Տեսանյութեր | 7,308,000 |
| 12 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների, դահլիճի վարձակալում և այլն) | 81,156,000 |
| 13 | | | Շապիկներ | 5,400,000 |
| 14 | | | Փուչիկներ | 150,000 |
| 15 | | | Օծանելիք | 500,000 |
| 16 | | | Ծաղիկներ | 500,000 |
| 17 | | | Գրիչներ | 30,000 |
| 18 | | | Օրացույցներ | 20,000 |
| 19 | | | Դրոշակներ | 50,000 |
| 20 | | | Թերթիկներ | 10,000 |
| 21 | | | Գրքույկների տպագրություն | 270,000 |
| | **Ընդհանուր** | **46,664,800** | **Ընդհանուր** | **129,689,233** |

## *«Դաշինք» կուսակցություն*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սկյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Պաստառներ և բուկլետներ | 117,750 | | |
| 2 | Գրենական պիտույքներ | 90,000 | | |
| 3 | Նախընտրական քարոզչություն | 41,840,000 | | |
| 4 | | | Վճարովի եթեր | 9,917,000 |
| 5 | | | Տեսանյութեր | 2,502,000 |
| 6 | | | Նախընտրական ծրագրի տպագրություն | 200,000 |
| | **Ընդհանուր** | **42,047,750** | **Ընդհանուր** | **13,737,340** |

## «Ժառանգություն» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սլյակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սլյակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների, դահլիճի վարձակալում և այլն) | 1,520,000 |
| 2 | | | Շապիկներ | 5,400,000 |
| 3 | | | Տեսանյութեր | 1,908,000 |
| 4 | | | Վճարովի եթեր | 13,389,667 |
| 5 | | | Պաստառներ | 386,000 |
| 6 | | | Բուկլետներ | 500,000 |
| 7 | | | Թերթիկներ | 250,000 |
| 8 | | | Քարոզչաթերթիկ, առնվազն 3 թողարկում | 50,000 |
| 9 | | | Գրպանի օրացույցներ | 100,000 |
| | **Ընդհանուր** | **53,354,180** | **Ընդհանուր** | **23,495,933** |

## Ժողովրդական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սլյակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սլյակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Նախընտրական գրավ | 2,500,000 | | |
| 2 | Նախընտրական բուկլետ | 180,000 | Բուկլետների տպագրություն | 2,000,000 |
| 3 | Նախընտրական պաստառ | 86,400 | Պաստառներ | 1,728,000 |
| 4 | Նախընտրական գովազդ | 19,710,934 | | |
| 5 | Գրպանի օրացույց | 99,960 | | |
| 6 | | | Վճարովի եթեր | 10,700,000 |
| 7 | | | Տեսանյութեր | 1,080,000 |
| | **Ընդհանուր** | **22,577,294** | **Ընդհանուր** | **15,482,833** |

## «Ժողովրդավարական ուղի» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սլյակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սլյակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Քարոզչապաստառներ | 500,000 | Պաստառներ | 3,816,80 |
| 2 | Քարոզչային տրանսպորտային արշավ | 1,500,000 | | |
| 3 | Վճարում «Տիգրան Մեծ» հրատարակչությանը | 732,029 | | |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 4 | Նախընտրական գովազդ Հանրային հեռուստատեսությամբ | 4,267,971 | | |
| 5 | | | Վճարովի եթեր | 4,258,667 |
| 6 | | | Տեսանյութեր | 1,152,000 |
| 7 | | | Բուկլետների տպագրություն | 900,000 |
| 8 | | | Նախընտրական ծրագրի տպագրություն | 450,000 |
| 9 | | | Օրացույցներ | 50,000 |
| 10 | | | Հերակալ թղթից | 250,000 |
| | **Ընդհանուր** | **7,000,000** | **Ընդհանուր** | **10,876,747** |

## «Իմպիչմենտ» դաշինք

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Հոլովակի պատրաստում | 110,000 | | |
| 2 | Գույքի ձեռքբերում | 485,000 | | |
| 3 | Վառելանյութ | 29,950 | | |
| 4 | Վճարովի եթերաժամ | 3,432,000 | Վճարովի եթեր | 3,797,200 |
| 5 | | | Տեսանյութեր | 270,000 |
| 6 | | | Օրացույցներ | 250,000 |
| 7 | | | Թռուցիկներ | 66,000 |
| | **Ընդհանուր** | **4,056,950** | **Ընդհանուր** | **4,381,200** |

## «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունակները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունակները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | | | ՀՅԴ պաշտոնաթերթ | 5,250,000 |
| 2 | | | Օրացույցներ | 150,000 |
| 3 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների, դահլիճի վարձակալում և այլն) | 8,902,800 |
| 4 | | | Վճարովի եթեր | 19,089,500 |
| 5 | | | Տեսանյութեր | 3,672,000 |
| 6 | | | Բացիչներ (կախազարդեր) | 350,000 |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 7 | | | Գրիչներ | 80,000 |
| 8 | | | Կրակայրիչներ | 80,000 |
| 9 | | | Շապիկներ | 5,400,000 |
| 10 | | | Փուչիկներ | 150,000 |
| 11 | | | Բացիկներ | 250,000 |
| 12 | | | Պիտակներ | 50,000 |
| 13 | | | Թռուցիկներ | 462,000 |
| 14 | | | Խաղալիքներ | 600,000 |
| 15 | | | Բուկլետներ | 2,305,000 |
| 16 | | | Գրքույկներ | 2,035,000 |
| 17 | | | Պաստառներ | 5,296,840 |
| 18 | | | Վահանակների պատրաստում և տեղադրում | 1,694,280 |
| 19 | | | Հրավիրատոմսերի տպագրություն | 65,000 |
| | **Ընդհանուր** | **58,463,000** | **Ընդհանուր** | **55,882,420** |

## Հայաստանի դեմոկրատական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Նախընտրական բուկլետի տպագրում | 160,000 | | |
| 2 | Հեռուստագովազդի և բուկլետի ձևավորում | 100,000 | | |
| 3 | Տրանսպորտային ծառայություններ | 35,000 | | |
| 4 | Պիտակներ | 3,600 | | |
| 5 | | | Տեսանյութեր | 720,000 |
| | **Ընդհանուր** | **298,600** | **Ընդհանուր** | **720,000** |

## Հայաստանի երիտասարդական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Վճարովի եթեր | 2,000,000 | Վճարովի եթեր | 2,022,667 |
| 2 | | | Տեսանյութեր | 720,000 |
| | **Ընդհանուր** | **2,000,000** | **Ընդհանուր** | **2,742,667** |

## Հայաստանի ժողովրդական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Նախընտրական բուկլետների տպագրում | 1,270,000 | Բուկլետներ | 1,850,000 |
| 2 | Բենզին | 268,500 | | |
| 3 | Գովազդային հոլովակներ | 1,211,500 | Տեսանյութեր | 1,026,000 |
| 4 | | | Նախընտրական ծրագրի տպագրություն | 405,000 |
| 5 | | | Պաստառներ | 798,060 |
| 6 | | | Վճարովի եթեր | 582,667 |
| | **Ընդհանուր** | **2,750,000** | **Ընդհանուր** | **4,661,727** |

## Հայաստանի կոմունիստական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Նախընտրական ծրագրի տպագրում | 800,000 | Նախընտրական ծրագիր | 162,000 |
| 2 | Վճարովի հեռուստաեթերաժամ | 160,000 | Վճարովի հեռուստաեթեր | 156,000 |
| 3 | Վճարովի ռադիոեթերաժամ | 60,000 | Վճարովի ռադիոեթեր | 30,333 |
| 4 | | | Տեսանյութեր | 324,000 |
| | **Ընդհանուր** | **1,020,000** | **Ընդհանուր** | **672,333** |

## Հայաստանի հանրապետական կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Պաստառների տպագրություն | 9,990,000 | Պաստառներ | 18,284,850 |
| 2 | ՀՀԿ դրոշ | 1,500,000 | Դրոշներ | 100,000 |
| 3 | Գովազդային վահանակների տեղադրում և սպասարկում | 995,000 | Վահանակների պատրաստում և տեղադրում | 9,264,790 |
| 4 | Վճարովի եթեր | 34,174,000 | Վճարովի եթեր | 8,242,000 |
| 5 | Բուկլետների, օրացույցների և նախընտրական ծրագրերի տպագրում | 4,400,580 | Բուկլետների, օրացույցների և նախընտրական ծրագրերի տպագրություն | 5,650,000 |
| 6 | ՀՀԿ նախընտրական թերթի տպագրում | 1,500,000 | Թերթի տպագրություն | 6,000,000 |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 7 | ՀՀԿ նախընտրական պաստառների հենասյուններին տեղադրում | 900,000 | | |
| 8 | ՀՀԿ նախընտրական այցեքարտերի տպագրում | 250,200 | | |
| 9 | ՀՀԿ նախընտրական հիմնադրամին սահմանված չափից ավելի գումարների վերադարձ | 200,000 | | |
| 10 | Այլ (գրենական պիտույքներ, սնունդ, վառելիք, DVD սկավառակներ, տեխնիկական ծախսեր) | 5,000,000 | | |
| 11 | | | Գրքույկների տպագրություն | 4,200,000 |
| 12 | | | Տեսանյութեր | 3,060,000 |
| 13 | | | Ժապավեններ | 30,000 |
| 14 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների, դահլիճի վարձակալում և այլն) | 13,084,000 |
| 15 | | | Կրծքանշաններ | 300,000 |
| 16 | | | Կախազարդեր | 300,000 |
| 17 | | | Կրակայրիչներ | 30,000 |
| 18 | | | Գրիչներ | 30,000 |
| 19 | | | Փուչիկներ | 150,000 |
| 20 | | | Տրանսպորտային միջոցների վարձակալում կամ ձեռքբերում | 800,000 |
| 21 | | | Շապիկներ | 5,400,000 |
| 22 | | | Բաճկոնակներ (ժիլետներ) | 3,900,000 |
| 23 | | | Թռուցիկներ | 150,000 |
| 24 | | | «Քեզ համար Հայաստան» խտասկավառակ (CD) | 175,000 |
| 25 | | | Թերթիկ (հուշագիր) | 10,000 |
| | **Ընդհանուր** | **58,909,780** | **Ընդհանուր** | **79,161,140** |

## «Համրապետություն» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Քարոզչական բուկլետների, պաստառների, ծրագրերի և օրացույցների պատրաստում | 1,050,000 | | |
| 2 | Քաղաքական գովազդ | 1,724,000 | | |
| 3 | Բենզին | 270,000 | | |
| 4 | | | Գրքույկներ և բուկլետներ | 820,000 |
| 5 | | | Տեսանյութեր | 630,000 |
| 6 | | | Վճարովի եթեր | 1,774,813 |
| | **Ընդհանուր** | **3,044,000** | **Ընդհանուր** | **3,224,813** |

## Միավորված աշխատանքային կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Պլակատի և բուկլետի տպագրություն | 1,920,000 | | |
| 2 | Գովազդի ստեղծում | 181,500 | | |
| 3 | Գովազդային պաստառներ | 4,665,000 | Պաստառներ | 4,809,840 |
| 4 | Գրպանի օրացույցի պատրաստում | 252,000 | | |
| 5 | Տեսանյութերի հեռարձակում | 3,200,000 | | |
| 6 | Նյութի տպագրություն | 502,280 | | |
| 7 | Գովազդային ծառայություն | 775,584 | | |
| 8 | | | Վճարովի եթեր | 3,405,433 |
| 9 | | | Դրոշներ | 1,650 |
| 10 | | | Բուկլետներ | 1,380,080 |
| 11 | | | Վահանակների պատրաստում և ստեղծում | 798,480 |
| 12 | | | Տեսանյութեր | 2,142,000 |
| | **Ընդհանուր** | **11,496,364** | **Ընդհանուր** | **12,537,403** |

## Միացյալ ազատական ազգային կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Գովազդային պաստառների ձեռքբերում և տեղադրում | 396,000 | | |
| 2 | Բուկլետների տպագրում | 656,400 | Բուկլետներ | 190,000 |
| 3 | Պաստառներ | 82,500 | Պաստառներ | 176,640 |
| 4 | Գովազդային հոլովակների պատրաստում | 1,615,100 | | |
| 5 | | | Տեսանյութեր | 6,138,000 |
| 6 | | | Վահանակների պատրաստում և ձեռքբերում | 817,320 |
| | **Ընդհանուր** | **2,750,000** | **Ընդհանուր** | **7,321,960** |

## «Նոր ժամանակներ» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Բենզինի գնում | 71,709 | | |
| 2 | Նախընտրական գովազդ | 11,089,000 | | |
| 3 | | | Վճարովի եթեր | 9,899,813 |
| 4 | | | Տեսանյութեր | 324,000 |
| 5 | | | Բուկլետներ | 175,000 |
| 6 | | | Քարոզչաթերթեր | 700,000 |
| | **Ընդհանուր** | **11,160,709** | **Ընդհանուր** | **11,098,813** |

## Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Բուկլետներ | 336,000 | Բուկլետներ | 900,000 |
| 2 | Նախընտրական պաստառներ | 135,000 | | |
| 3 | | | Վճարովի եթեր | 322,667 |
| 4 | | | Տեսանյութեր | 270,000 |
| | **Ընդհանուր** | **471,000** | **Ընդհանուր** | **1,492,667** |

## «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյուլները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյուլները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Այցեքարտերի տպագրում | 50,000 | | |
| 2 | | | Տեսանյութեր | 306,000 |
| | **Ընդհանուր** | **50,000** | **Ընդհանուր** | **306,000** |

## «Օրինաց երկիր» կուսակցություն

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյուլները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյուլները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների, դահլիճի վարձակալում) | 2,960,000 |
| 2 | | | Շապիկներ | 5,400,000 |
| 3 | | | Գրքույկներ | 4,850,000 |
| 4 | | | Վճարովի եթեր | 12,019,834 |
| 5 | | | Տեսանյութեր | 576,000 |
| 6 | | | Օրացույցներ | 460,000 |
| 7 | | | ՕԵԿ պաստառաթերթի 2 համարի թողարկում | 250,000 |
| 8 | | | Թռուցիկներ | 300,000 |
| 9 | | | «Օրենք և իշխանություն» խտասալիկ-կարակի (CD) պատրաստում | 1,200,000 |
| 10 | | | Օծանելիք | 100,000 |
| 11 | | | Ծաղիկներ | 100,000 |
| 12 | | | Դրոշակներ | 100,000 |
| 13 | | | Փուչիկներ | 150,000 |
| 14 | | | Փայտե կախազարդեր | 300,000 |
| 15 | | | Պաստառներ | 3,750,200 |
| 16 | | | Վահանակների պատրաստում և տեղադրում | 633,610 |
| | **Ընդհանուր** | **32,084,100** | **Ընդհանուր** | **33,149,644** |

## Հավելված 2. 2008թ. նախագահական ընտրություններ. նախագահական թեկնածուների ծախսերի համեմատական տվյալները

### Արթուր Բաղդասարյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | | | Օրացույցներ | 960,000 |
| 2 | | | Պաստառներ | 808,750 |
| 3 | | | Բուկլետներ | 3,600,000 |
| 4 | | | Բացիկներ | 650,000 |
| 5 | | | Գրքեր («Դիմանկար») | 1,500,000 |
| 6 | | | Գրքույկներ | 600,000 |
| 7 | | | Էջանիշ | 700,000 |
| 8 | | | Վճարովի եթեր | 32,920,000 |
| 9 | | | Տեսանյութեր | 1,200,000 |
| 10 | | | Վահանակների պատրաստում և տեղադրում | 2,906,000 |
| 11 | | | Բաժակներ | 240,000 |
| 12 | | | Միկրոավտոբուսի վարձակալում | 280,000 |
| 13 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների վարձակալում) | 200,000 |
| | **Ընդհանուր** | **46,464,460** | **Ընդհանուր** | **45,998,617** |

### Արտաշես Գեղամյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Նախընտրական ծրագրի և օրացույցների տպագրություն | 1,730,000 | Նախընտրական ծրագրի և օրացույցների տպագրություն | 1,885,000 |
| 2 | Գովազդային ծառայության մատուցում | 600,000 | | |
| 3 | Նախընտրական ֆառոզչանյութերի 2 շնորհահանդես | 1,152,000 | Նախընտրական միջոցառումներ (դահլիճի վարձակալում) | 1,186,000 |
| 4 | Վճարովի եթեր | 10,800,000 | Վճարովի եթեր | 11,370,000 |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 5 | Տպագրական ծախսեր | 100,000 | Ա. Գեղամյանի ելույթների և հոդվածների ժողովածուի տպագրություն | 1,000,000 |
| 6 | Ծառայությունների մատուցում | 210,000 | | |
| 8 | | | Տեսանյութեր | 850,000 |
| | **Ընդհանուր** | **14,592,000** | **Ընդհանուր** | **16,291,833** |

## Տիգրան Կարապետյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Բուկլետի տպագրություն | 100,000 | Բուկլետներ | 14,400 |
| 2 | Եթերաժամ | 14,920,000 | Վճարովի եթեր | 14,768,200 |
| 3 | | | Պաստառներ | 35,000 |
| 4 | | | Տեսանյութեր | 500,000 |
| | **Ընդհանուր** | **15,020,000** | **Ընդհանուր** | **15,317,600** |

## Արամ Հարությունյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Տպագրական ծախսեր | 345,000 | | |
| 2 | Ավտոմեքենայի վառելիք | 295,000 | | |
| 3 | Գրասենյակի, կապի և այլ ծախսեր | 200,000 | | |
| 4 | Վճարովի եթեր | 160,000 | Վճարովի եթեր | 157,333 |
| 5 | | | Տեսանյութեր | 300,000 |
| | **Ընդհանուր** | **1,000,000** | **Ընդհանուր** | **457,333** |

## Վահան Հովհաննեսյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | | | Բացիկ-թերթ «Համաձայնագիր» | 22,000,000 |
| 2 | | | Բուկլետներ | 490,000 |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 3 | | | Տեսանյութեր | 1,300,000 |
| 4 | | | Վճարովի եթեր | 55,573,933 |
| 5 | | | Ուսանողական տարբերական | 990 |
| 6 | | | Պաստառներ | 1,261,250 |
| 7 | | | Գրքույկներ (բրոշյուրներ) | 454,700 |
| 8 | | | Միկրոավտոբուսի վարձակալում | 280,000 |
| 9 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների վարձակալում) | 240,000 |
| 10 | | | Տորակ բացիկով («Ձեր հին ընկեր») | 100,000 |
| 11 | | | Ուղերձի տպագրություն | 200,000 |
| 12 | | | Վահանակների պատրաստում և տեղադրում | 1,105,920 |
| 13 | | | Բացիկներ | 1,405,000 |
| 14 | | | «Մեր ընկեր» երգի պաստեր | 600,000 |
| 15 | | | Դրոշներ | 17,500 |
| 16 | | | Փուչիկներ | 50,000 |
| 17 | | | Բաժակներ | 250,000 |
| 18 | | | Շարֆեր | 100,000 |
| | **Ընդհանուր** | **60,669,940** | **Ընդհանուր** | **85,429,293** |

## Վազգեն Մանուկյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյունները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյունները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Բրոշյուրների տպագրում | 1,540,000 | Բրոշյուրներ | 2,700,000 |
| 2 | Տարածքի, սրահների և դահլիճների վարձակալում | 1,134,000 | Դահլիճների վարձակալում | 720,000 |
| 3 | Պաստառների տպագրություն | 233,200 | Պաստառներ | 127,350 |
| 4 | Տեսահոլովակների և հայտարարությունների հեռարձակում | 1,475,730 | Վճարովի եթեր | 1,427,000 |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյուները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյուները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 5 | Բուկլետների տպագրում | 2,018,000 | Բուկլետներ | 200,000 |
| 6 | Պլակատների տպագրում | 426,000 | | |
| 7 | Ուացուցների տպագրություն | 450,000 | Ուացուցներ | 65,000 |
| 8 | Դրոշների ձեռք բերում | 60,000 | | |
| 9 | Տրանսպորտային ծառայություններ | 512,570 | | |
| 10 | Փուշիկների գնում | 31,500 | | |
| 11 | | | Տեսանյութեր | 500,000 |
| 12 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների վարձակալում) | 40,000 |
| 13 | | | Գովազդ թերթում | 56,600 |
| 14 | | | Տեսախտսակավառակ-ների (DVD) գնում | 50,000 |
| | **Ընդհանուր** | **7,881,000** | **Ընդհանուր** | **5,885,950** |

## *Արման Մելիքյան*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյուները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյուները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | | | Բրոշյուրի տպագրություն | 550,000 |
| 2 | | | Տեսանյութեր | 150,000 |
| | **Ընդհանուր** | **0** | **Ընդհանուր** | **700,000** |

## *Սերժ Սարգսյան*

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային սյուները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի սյուները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| N | Ծախսի տեսակը | Ծախսի չափը | Ծախսի տեսակը | Ծախսի չափը |
| 1 | Գրպանի ուացուցների տպագրում | 70,000 | Ուացուցների տպագրություն | 480,000 |
| 2 | Տարբեր չափսերի դրոշներ և դրոշակներ | 3,291,180 | Դրոշներ և դրոշակներ | 350,000 |
| 3 | Գովազդային վահանակների տեղադրում և սպասարկում | 1,711,980 | Գովազդային վահանակների տեղադրում և սպասարկում | 12,789,820 |
| 4 | Նախընտրական քարոզչություն | 33,024,000 | | |

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 5 | Գովազդ | 3,413,038.8 | | |
| 6 | Գովազդ թերթերում | 833,720 | Գովազդ թերթերում | 130,000 |
| 7 | Տարբեր տեսակի պաստառների տեղադրում և սպասարկում | 3,479,600 | | |
| 8 | Պաստառների տպագրություն | 13,391,272 | Պաստառներ | 6,833,500 |
| 9 | Փոխհատուցում Միացյալ ազգային կուսակցությանը նախընտրական քարոզչական նյութերի համար | 140,000 | Միացյալ ազգային կուսակցության ակտիվիստների կողմից Սերժ Սարգսյանի քարոզարշավի ժամանակ օգտագործված բաճկոններ և տոպրակներ | 1,600,000 (1,500,000 բաճկոնների և 100,000 տոպրակների համար) |
| 10 | Վճարում հայտարարության համար | 1,636,900 | | |
| 11 | Հիշեցման քերթիկների տպագրություն | 117,720 | | |
| 12 | Կրծքանշաններ | 1,600,000 | | |
| 13 | Գրիչներ, նշաններ | 1,092,704 | | |
| 14 | Կրակվառիչներ, շարֆեր | 885,600 | Կրակայրիչներ և շարֆեր | 10,150,000 (150,000 կրակահրիչների և 10,000,000 շարֆերի համար) |
| 15 | Ջայնասկավառակներ | 300,000 | | |
| 16 | Այլ[79] | | | |
| 17 | | | Բուկլետներ | 7,450,000 |
| 18 | | | Բրոշյուրներ | 1,260,000 |
| 19 | | | Անվճար թերթ («Երեկոյան Երևան») | 10,800,000 |
| 20 | | | Փուչիկներ | 600,000 |
| 21 | | | Տրանսպարանտներ | 25,000 |
| 22 | | | Գրիչներ | 300,000 |
| 23 | | | Վճարովի եթեր | 32,655,200 |
| 24 | | | Տեսանյութեր | 5,600,000 |
| 25 | | | Ավտոբուսի վարձակալում | 90,000 |

79 «Այլ» ծախսատեսակի մեջ ներառված են այն վճարները, որոնց դեմքում հայտարարագրում նշված է միայն ծառայություն կամ ապրանք մատուցող ընկերության անվանումը՝ առանց նշելու ծառայության կամ ապրանքի տեսակը, ինչպես նաև մուծումների եսվերադարձը կամ փոխանցումը ոեսբյուջե:

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 26 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների վարձակալում) | 1,900,000 |
| | **Ընդհանուր** | **69,961,437** | **Ընդհանուր** | **93,013,520** |

## Լևոն Տեր-Պետրոսյան

| Նախընտրական հիմնադրամի հայտարարագրի ծախսային տվյալները, դրամներով | | | Ծախսերի մոնիտորինգի տվյալները, դրամներով | |
|---|---|---|---|---|
| **N** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** | **Ծախսի տեսակը** | **Ծախսի չափը** |
| 1 | Քարոզչական նյութի տպագրություն | 1,520,000 | | |
| 2 | Լուսանկարների տպագրում | 185,000 | | |
| 3 | DVD սկավառակների գնում | 900,000 | Տեսախտասկավառակների (DVD) գնում | 1,000,000 |
| 4 | Վճարովի հեռուստաեթեր | 30,537,740 | Վճարովի հեռուստաեթեր | 28,477,700 |
| 5 | Ռուսերեն լեզվով նախընտրական ծրագրի տպագրություն | 120,000 | | |
| 6 | Քարոզչական պաստառներ | 252,000 | Պաստառներ | 540,000 |
| 7 | Վճարովի ռադիոեթեր | 1,200,000 | Վճարովի ռադիոեթեր | 1,158,667 |
| 8 | | | Տեսանյութեր | 1,400,000 |
| 9 | | | Հուշաթերթիկ | 10,000 |
| 10 | | | Էջանիշ | 10,000 |
| 11 | | | Բրոշյուրներ | 2,880,000 |
| 12 | | | Բացիկներ | 110,000 |
| 13 | | | Նախընտրական միջոցառումներ (սարքավորումների վարձակալում) | 490,000 |
| 14 | | | Կեպիներ | 500,000 |
| 15 | | | Պաստառներ կտորից | 1,839,500 |
| 16 | | | Դրոշներ | 10,000 |
| 17 | | | Փուչիկներ | 100,000 |
| | **Ընդհանուր** | **34,714,740** | **Ընդհանուր** | **38,525,867** |